

## ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԴԻՄԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՅԱԲԵԿՈՒՄՆԵՐՈՒ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՆՈՅՆ ԹԱՓՈՎ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՔՈՒԼԻՍԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ՝ ԸՆԴԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆ ՐԵՏ

Փետրուար 19-ի նախագահական ընտրություններին մեկ շաբաթ անց, Երեւանի ազատութեան հրապարակին վրայ կը շարունակուին Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցներու շուրջօրեայ հանրահաւաքները՝ տասնեակ հազարաւոր ժողովուրդի մասնակցութեամբ: Հանրահաւաքներուն զուգահեռ տեղի կ'ունենան ամէնօրեայ բողոքի ցույցեր՝ Երեւանի կեդրոնական փողոցներով:

Վերջին տարիներուն անտարբեր նկատուող երիտասարդութիւնը այս օրերուն ոտքի ելած է եւ հանրահաւաքներու եւ ցույցերու մասնակցողներուն մէջ սկսած է կազմել մեծամասնութիւն:

Համաժողովրդական հուժկու շարժումի բնոյթ ստացած այս հանրահաւաքները դադարեցնելու նպատակով, իշխանութիւնները վերջին օրերուն սկսան դիմել ձեռքարկութիւններու՝ ընդդիմադիր գործիչներու շարքերէն ներս: Սակայն, այդ քայլերը կու գան աւելի եւս ամբարայղելու ժողովուրդի կամքը՝ ամէն գնով ձեռքազատուելու գործող վարչակարգէն:

Ուշագրաւ էր Երեքշաբթի, Փետրուար 26-ի հանրահաւաքը իր բազմամարդութեամբ՝ շնորհիւ Սերժ Սարգսեանի կողմնակիցներու կազմակերպած հանրահաւաքին: Արդարեւ, իշխանական ուժի ցուցադրութեան համար շրջաններէն պատերով Երեւան բերուած ժողովուրդի մեկ մասը եկաւ միանալու Օփերայի առջեւ հաւաքուած ժողովուրդին:

«Այստեղ առնուազն կանգնած է կէս միլիոն մարդ», - ըսաւ Տէր-Պետրոսեան ու շարունակեց. - «Ես ձեզ եմ դիմում՝ նոյնիսկ ընկերական, իմ բարեկամական վերաբերմունքով. Ռոբերդ, Սերժ, խելքի եկէք, հասկացէք, թէ ինչ է կատարուած այս երկրում: Քաջութիւն ունեցէք: Կարող էք ժողովրդի միջով չգալ: Օպերան ունի ետնամուտք. այնտեղից դուք կարող էք գալ: Մենք մի կարմիր գորգ էլ կը փռենք ձեր առաջ՝ մինչեւ այս միկրոֆոնը, եւ այստեղից տուէք ձեր հրաժարականը եւ թողէք՝ հեռացէք այս երկրից»:

Շարունակելով՝ Տէր-Պետրոսեան ըսաւ. - «Ես ուզում եմ դիմել



Օփերայի առջեւ օրերէ ի վեր կրկնուող տեսարանը

նաեւ մեր խորհրդարանին, մեր պատգամաւորներին: Սիրելի ժողովրդի ընտրեալներ, ահա ձեր ժողովուրդը: Մենք ձեզ հրաւիրում ենք այս հարթակ: Բոլորին՝ ամ-

բողջ կազմով: Լքէք այդ շէնքը, եկէք այս հարթակ. ահա ձեր խորհրդարանը, ահա ձեր Ազգային ժողո-

Շաբ.ը էջ 4

### ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՑՈՅՑ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ



Տեսարան մը Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցած զօրակցական ցոյցէն

Կիրակի Փետրուար 24-ին Լոս Անճելըսի Լիթըլ Արմենիա թաղամասէն ներս տեղի ունեցաւ բողոքի ցույց-հանրահաւաք, որուն կը մասնակցէին 15 հազարէ աւելի ժողովուրդ: Հանրահաւաքի նպատակն էր առաջին հերթին զօրակցիլ Հայաստանի մէջ թափ առած համաժողովրդական շարժումին եւ կոչ ընել Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան ըլլալ հետեւողական Հայաստանի մէջ ժողովրդավարութեան սկզբունքներու պահպանման հարցով, չճանչնալ նախագահական ընտրութիւններու արդիւնքները, դատապար-

տել հայաստանեան իշխանութիւններու կողմէ սանձազերծուած բռնութիւններն ու ապօրինի ձեռքարկութիւններու շարքը եւ պահանջել՝ վերջ տալ քաղաքական հետապնդումներուն:

Հանրահաւաքին ելոյթ ունեցողները դատապարտեցին ընտրակեղծիքներով, բռնութիւններով, ահաբեկումներով ու այլ տեսակի ապօրինի գործողութիւններով կայացած ընտրութիւնները: Հանրահաւաքը արձանագրեց, որ ընտրութիւններու արդիւնքները չեն հա-

Շաբ.ը էջ 4

### Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Հայաստանի մէջ շարունակուող համաժողովրդային շարժումին իր զօրակցական խօսքը յղեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը: Փետրուար 22-ին հրապարակուած հետեւեալ յայտարարութիւնը ընթերցուեցաւ Ազատութեան հրապարակին վրայ հաւաքուած բազմահազար ժողովուրդի առջեւ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը, համայն սփիւռքահայութեան անունով կու գայ յայտնելու իր ամբողջական զօրակցութիւնը Հայաստանի մէջ թափ առած համաժողովրդական շարժումին՝ ազատութեան ու արդարութեան համար իր մղած այս պայքարի ընթացքին, ու աւելի քան վստահ ենք անոր վերջնական յաղթանակին:

Արտասահմանի մէջ ապրող հայ ժողովուրդի զաւակները վաչրկեանը-վաչրկեանին կը հետեւին մայր հայրենիքի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ ժողովրդային վեհ շարժումի ստացած լայն տարողութեան:

Մենք կը դատապարտենք՝ ժողովուրդի ձայները գողնալու միջոցաւ հերթական լեզուաշրջումը իրականացնելու փորձերը եւ վստահ ենք որ այդ քայլերը պիտի մատնուին ձախողութեան, շնորհիւ մեր բոլորի միասնականութեան:

Մենք կը զգուշացնենք Հայաստանի իշխանութիւններուն՝ հեռու մնալ խաղաղ ժողովուրդի դէմ բռնամիջոցներ օգտագործելու ամէն տեսակի արկածախնդրական քայլերէ:

Մենք կը պահանջենք Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովէն՝ հաստատել Լեւոն Տէր-Պետրոսեանի յաղթանակը՝ որպէս ազգընտիր նախագահ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան սփիւռքեան կառույցները իրենց բոլոր միջոցները ի սպաս դրած են Հայաստանի մէջ ժողովրդավարութեան վերահաստատման եւ բռնատիրական ռեժիմի տապալման գործին:

Թէեւ հազարաւոր մղոններ իրարմէ հեռու, Հայ ժողովուրդի երկու հատուածները, վերջին տասնամեակին երբեք իրար այսքան մօտ եւ հարազատ չեն եղած, որքան այս պահուն: Մեր միտքը, մեր սիրտը ու մեր հոգին Հայրենիքի ժողովուրդի հետն է:

Կեցցէ՛ Համաժողովրդային շարժումը  
 Կեցցէ՛ս Հայաստանը

**ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ՄԻՇՏ ՉԷ, ՈՐ ՈՒԺԸ ՔԵՉ ՎԱՄԱՐ Է ԻՐԱԻՈՒՆՔ ԾՆՈՒՄ**

Այս օրերին Երեւանում ամենաշատը շրջանառուող լուրն այն է, որ իշխանութիւնը կայացրել է Լեւոն Տէր-Պետրոսեանի կազմակերպած ժողովրդական բողոքի ցույցը ուժով ցրելու որոշում: Շրջանառուում են խօսակցութիւններ Տէր-Պետրոսեանի տրուած տարբեր ժամկէտների մասին, որոնց սահմանում բողոքը չզողարեցնելու դէպքում իշխանութիւնն արդէն դիմելու է ուժով: Ընդ որում, իշխանութիւնն այդ լուրերի վրայ իւր է լցնում, հեռուստատեսութեամբ պարբերաբար հրատարակելով ոստիկանութեան յայտարարութիւններ այն մասին, թէ իբր Ազատութեան հրապարակում թմրամոլներ են հաւաքուել, թէ իբր հրատարակող զորտնտես է, թէ իբր հասարակական կարգին է խանգարում, շրջապատի բնակիչներն ամբողջ գիշեր հնչող աղմուկից չեն կարողանում քնել: Բացի այդ յայտարարութիւններից, ուժային լուծման մասին խօսակցութիւնները իսթանուեցին նաեւ այն ձեռքակալութիւններով, որ իշխանութիւնն արեց Լեւոն Տէր-Պետրոսեանի մի քանի

պահել հանրահասարակական բազմութիւնը, իսկ օրուայ պատիւ ժամերին էլ ապահովել նուազագոյն անհրաժեշտ քանակը: Երկրորդ, Լեւոն Տէր-Պետրոսեանը դեռեւս իշխանութեանը չի տուել ուժի կիրառման հիմնաւոր առիթ: Երրորդ, իշխանութիւնն ամենեւին էլ այն մոնոլիտ բուրգը չէ արդէն, որ կար ընդամենը երկու-երեք տարի առաջ: Աւելին, բուրգը ոչ միայն մոնոլիտ չէ, այլ նաեւ դարձել է երկգագաթ՝ ի դէմս Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի: Բանն այն է, որ ցուցարարների հանդէպ ուժի կիրառումը կարող է, նոյնիսկ արդիւնաւէտ լինելու պարագայում, նրանց կանգնեցնել բոլորովին այլ իրողութեան առաջ: Եթէ անգամ պատասխանատուութիւնը դրուի Ռոբերտ Քոչարեանի վրայ, իսկ Սերժ Սարգսեանն էլ հրատարակաւ, ձեռքերը լուանայ եւ ասի որ ինքն անմասն է ժողովրդի արիւնից, միեւնոյն է, այդ արեան պատասխանատուութիւնն ընկնելու է իր վրայ, որովհետեւ Ռոբերտ Քոչարեանը եթէ դիմի ուժի, ապա դիմելու է Սերժ

**«ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ» ԶԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏՈՒԵՐԸ**

Նախագահական իսպառուակ այս ընտրութիւններին յաջորդած հուժկու ժողովրդական շարժումը եւ իբր ընդդիմադիր եօթ թեկնածուների «գառնուկների լուծիւնը» եւս մէկ անգամ ապացուցեցին, որ Լեւոն Տէր-Պետրոսեանն իսկապէս պայքարում էր միաժամանակ ե՛ւ ռեժիմի, ե՛ւ այս կամ այն կերպ այդ ռեժիմին ծառայող ուժ թեկնածուների դէմ: Խօսքը, հասկանալի է, Արտաշէս Գեղամեանի մասին չէ: Նրա կերպարը ժողովրդին վաղուց էր յայտնի, նա միշտ էլ իրեն մօտաւորապէս նոյն կերպ է պահել, եւ նրա հաւաքած 0.46 տոկոսն, անկեղծ ասած, «դժոխի» համար դեռ մի բան էլ չաւտ է: Խօսքը Տիգրան Կարապետիչի մասին էլ չէ. նա իր գործը կատարեց՝ մի ամիս շարունակ ինչ-որ «կանխատեսող» էր ցոյց տալիս, ու պիտի որ գոհ լինի իր 0.6 տոկոսից: Ոչ էլ վաղուց Մանուկեանին արժէ անդրադառնալ: Այդպիսի քաղաքական գործիչ Հայաստանում այլեւս չկայ: Կայ ինքնասիրահարուած մի խղճուկ՝ իր հաւաքած խղճուկ 1.2 տոկոսով, որը չգիտի էլ նոյնիսկ, թէ ինչի համար էր մեղան ընկել, եւ որի՞ Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ պայքարելու հիւանդագին սեւեռուածութիւնը ռեժիմը վարպետորէն օգտագործեց ու նետեց մի կողմ: Խօսքը դաշնակների եւ Արթուր Բաղդասարեանի մասին է: Դաշնակները հիմա սեթեւեթում են: Հրանդ Մարգարեանը կոտրատուելով յայտարարում է, թէ «մենք ընդունում ենք մեր պարտութիւնը»: Օյ... Սուտ էք ասում, դուք չէք ընդունում ձեր պարտութիւնը: Եւ չէք ընդունում մի պարզ պատճառով՝ դուք չէք պարտուել: Դուք լաւ էլ «յաղթել էք»՝ ռեժիմի հետ ձեռք-ձեռքի տուած պայքարելով ժողովրդի դէմ: Դրա համար էլ 2007-ի Մայիսի համեմատ կրկնակի քիչ ձայն էք ստացել ու ծպտուն չէք հանում: Ծպտուն հանող լինէիք՝ որպէս նախագահի թեկնածու Սաշիկ Մարգարեանի ինամուն չէիք «ընտրի»: «Պարտութիւնն ընդունելու» կարիք չկայ: Ձեր կարծիքով՝ լաւ էլ յաղթել էք ու կարծում էք, թէ վայելելու էք որպէս կրծօն ձեզ նետուած մի քանի խղճուկ պորտֆելները: Եւ որեւէ մէկը կ՛ԵՅ-ում ձեր ներկայացուցչի «վերապահումների» կամ «յատուկ կարծիքի» կարիքը չունի: Ընտրութիւնների վերաբերեալ «յատուկ կարծիքը» ժողովուրդն արտայայտում է Ազատութեան հրատարակում. եթէ «երեսատեղ» ու ժողովրդի հաջբերի մէջ նայելու համարձակութիւն ունէք՝ գնացէք Ազատութեան հրատարակ: Հիմա անդրադառնանք Արթուր Բաղդասարեանին: Նրա շտաբը հանրապետութեան մօտ 200 ընտրատեղամասերում վերահաշուարկի պահանջ է ներկայացրել: Իբր՝ մենք էլ ենք պայքարում ընտրակեղծիքների դէմ: Ընտրակեղծիքների դէմ պայքարող էիք՝ մինչեւ ընտրութիւնները միանայիք համաժողովրդական շարժմանը, ի՞նչն էր խանգարում: Կամ ի՞նչն է խանգարում հիմա միանալ: Արդէն պարզ է, չէ՞, թէ ով է համաժողովրդական հուժկու շարժման առաջնորդը, եւ ում դէմ էր ռեժիմն իրականացնում ամենաայլանդակ կեղծիքները: Թէ՞ «յաճախորդի» կարգավիճակը թոյլ չի տալիս: Կամ գուցէ որպէս «յաճախորդ» նոր հրահանգ էք ստացել՝ հիմա էլ ընտրութիւնների արդիւնքները վի-

ճարկողների բանակը պառակտել: Համ էլ, ամօթ չլինի հարցնելը, որպէս ի՞նչ էիք շեղինէ Բիշարեանին ուղարկել Ազատութեան հրատարակ՝ ընթերցելու ձեր յայտարարութիւնը: Բան ունէիք ասելու՝ գալիք ասէիք, ի վերջոյ ձեր ձայներն էին կեղծել, ոչ թէ շեղինէ Բիշարեանին: Թէ՞ մտածում էիք՝ ժողովուրդը յանկարծ կը գոռայ «Արթուր-դաւաճան»: Մի վախեցէք, ժողովուրդը ռեժիմի դէմ է պայքարում, ոչ թէ ռեժիմի «յաճախորդների»:

Ի դէպ, ռեժիմի «յաճախորդներն» այս անգամ նոր բան էին յայտնագործել: Յանձնաժողովներից նախապէս ճշդում էին, թէ յատկապէս որ ընտրատեղամասերում են արդէն հասցրել «դգել-փչել» արդիւնքները, եւ դիմում-բողոքներ էին ներկայացնում՝ պահանջելով այդ տեղամասերում ձայների վերահաշուարկ կատարել: Սա երկու նպատակ է հետապնդում: Առաջին՝ յետոյ կ'արձանագրուի, որ «բողոքարկուած ընտրատեղամասերում» ամէն ինչ նորմալ է, եւ երկրորդ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի ներկայացուցչների կողմից բողոքարկուած տեղամասերը ստուգելու հերթը կամ չի հասնի, կամ էլ իշխանութիւններն այդ տեղամասերում իրավիճակը «դգել-փչելու» ժամանակ կ'ունենան:

Այնպէս որ, «յաճախորդ» թեկնածուներն ըստ էութեան շարունակում են ծառայել ռեժիմին եւ կատարել վերջինիս հրահանգները: Բայց սա այլեւս չի օգնի ռեժիմին: Նոյնիսկ ընտրութիւնների «նախական արդիւնքների» հրատարակումից յետոյ նորանոր ուժեր շարունակում են միանալ Լեւոն Տէր-Պետրոսեանին: Իսկ սա նախալուր է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը յաղթել է, որովհետեւ միայն յաղթած բանակի շարքերն են համալրում նման տեմպերով:

**ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ**  
**«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

**Շենց այդ հանգամանքն է երկրում ստեղծել այնպիսի վիճակ, որ այլեւս իշխանութիւնը որեւէ ռեսուրս չի գտնում հասարակական քիչ թէ շատ տեւական եւ բազմամարդ բողոքին արձագանգելու համար**

առանցքային կողմնակիցների շրջանում:

Ինչ խօսք, Հայաստանի որեւէ քաղաքացի երեւի թէ չի կասկածում, որ հասարակական բողոքի հետ յարաբերուելու մեր իշխանութեան ամէնից գործօն լծակը միշտ եղել է ուժայինը: Ընդ որում, զարմանլի է, բայց իշխանութիւնը կարծես թէ չի էլ մտածել որեւէ այլ լծակ կիրառելու հնարաւորութեան մասին անգամ: Եւ առաջին հերթին հենց այդ հանգամանքն է երկրում ստեղծել այնպիսի վիճակ, որ այլեւս իշխանութիւնը որեւէ ռեսուրս չի գտնում հասարակական քիչ թէ շատ տեւական եւ բազմամարդ բողոքին արձագանգելու համար: Մինչդեռ այդ իրողութիւնը յանգեցրել է նրան, որ իշխանութիւնը դարձել է իր սովորոյթի գերին: Այսինքն, ինքն իրեն գրկելով հանրութեան հետ հակասութեան պարագայում որեւէ այլ ռեսուրսից, իշխանութիւնը յայտնուել է անկիւնում եւ այդպիսի հակասութեան դրսեւորման դէպքում կամ պէտք է ուժ կիրառի, կամ չկիրառելու դէպքում կանգնի անգորութեան սպաւորութիւն թողնելու վտանգի առաջ, ինչը կարող է դառնալ իշխանական համակարգի արագ փլուզման պատճառ: Եւ թերեւս հենց դա է պատճառը, որ իշխանութիւնը Երեւանի փողոցներում ցուցադրում է իր ոստիկանական հնարաւորութիւնը եւ նաեւ յայտարարում այն գործի դնելու վճռականութեան մասին, առանձին դէպքերում արդէն իսկ դնելով գործի:

Սարգսեանի համար, ինչն էլ ցոյց էր տալիս այն ժամանակ, երբ հրաւիրել էր իր մօտ ՋՈՒ բարձրագոյն հրամկազմին, իսկ Սերժ Սարգսեանին էլ նստացրել իր կողքը: Այսինքն, Սերժ Սարգսեանը դժուար կացութեան մէջ է, ու մենք պէտք է օգնենք նրան: Թերեւս սա էր այդ տեսարանի լէյտմոտիւրը, որը կարդացում էր անգամ Սերժ Սարգսեանի հայեացքի մէջ: Այդ հայեացքից նաեւ զգացում էր, որ Սարգսեան էլ երեւի թէ գիտակցում է, որ ինքն ամէն դէպքում արդէն Հայաստանի նախագահ չէ: Հայաստանի նախագահն արդէն կամ կը դառնայ Լեւոն Տէր-Պետրոսեանը, կամ կը մնայ Ռոբերտ Քոչարեանը, որովհետեւ եթէ ազուամենայնիւ Ռոբերտ Քոչարեանին յաջողուի ինչ որ կերպ կոտրել Լեւոն Տէր-Պետրոսեանի շարժման թափը, ապա Սերժ Սարգսեանը Ռոբերտ Քոչարեանի իրեն մատուցած այդ, ծառայութեան դիմաց անկասկած պէտք է վճարի իշխանութեամբ: Այդ իսկ պատճառով, Սերժ Սարգսեանն ունի իշխանութիւն պահելու կամ ձեռք բերելու մի ճանապարհ՝ թոյլ չտալ, որ ուժ կիրառուի ցուցարարների հանդէպ: Դա ի հարկէ դեռեւս չի երաշխաւորում իշխանութիւն, իսկ գուցէ նոյնիսկ ենթադրում է իշխանութեան ոչ միայն դէ ֆակտո, այլ նաեւ դէ եոլոք կորուստ: Սակայն տուեալ դէպքում կայ մի շատ կարեւոր առանձնայատկութիւն: Սերժ Սարգսեանն այդպիսով ինքն է դառնում իր ճակատագրի տէրը, ոչ թէ այն վստահում է որեւէ մէկին, թէկուզ իր ընկեր Ռոբերտ Քոչարեանին, որը քաղաքական դաշտում առաջնորդուում է սեփական շահով, եւ կռում սեփական ճակատագրի: Ինչն, ի դէպ, միանգամայն բնական է ցանկացած քաղաքական գործչի համար:

**ՅԱԿՈՒԲ ԲԱՂՅԱՆ**  
**«ԼՐԱԳԻՐ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ՍՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՁՄ՝  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
ՎԱՁԳԵՆ ԽՈՏԱՆՃԵԱՆ  
3ՍՐԻԹ ՏԵՐ ԳՄԻԹԵԱՆ  
Գեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

«ՄԱՐԴԻԿ ԱՊՍԱՍԲԵԼՈՒ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԵՆ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Պետությունը պէտք է պաշտպանի մարդու իրաւունքները, այդ թւում ազատ տեղաշարժի, հանրահաւաստի իրաւունքը, ազատ միաւորումների ազատութիւնը, խօսքի ազատութիւնը, կարծիքի արտայայտման իրաւունքը: Եւ եթէ այդ ամէնը պետութիւնը չի ապահովում, ապա պետութիւնը ֆիքսուում է որպէս բռնապետութիւն եւ մարդը իրաւունք ունի ապստամբելու եւ բռնապետութեան եւ ճնշումների դէմ»,- «Ա1+»-ին տուած հարցազրոյցում ասել է Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը:



Արթուր Սաքունց

Իր ասածը հիմնաւորելու համար Արթուր Սաքունցը մէջբերում է «Մարդու իրաւունքների միջազգային բիլլ»-ի նախաբանի երրորդ պարբերութիւնը. «Անհրաժեշտ է օրէնքի իշխանութեամբ պաշտպանել մարդու իրաւունքները, որպէսզի նա, որպէս վերջին միջոց, հարկադրուած չընդվզի բռնակալութեան ու ճնշման դէմ» եւ աւելացնում. «Այսօր ժողովրդի միակ տարբերակը ընդվզումն ու ապստամբելն է: Եւ ինչքան էլ դա անուանեն իշխանութեան գաւթման փորձ, իշխանութիւնն իրենք արդէն գաւթել են, եթէ անուանեն սահմանադրական կարգի դէմ բռնութեան փորձ, արդէն իրենք սահմանադրական կարգը խախտել են»: Ըստ նրա՝ ներկայ ռեժիմը որեւէ զաղափար չունի, բացի «ուժային մեթոդների սնանկութիւնից», եւ անգամ մոռացուել է նախընտրական «Առաջ, Հայաստան» կարգախօսը:

Արթուր Սաքունցը նաեւ տեղեկացնում է, որ այսօր վանաձորի տարբեր հաստատութիւնների աշխատողներին վաղը ստիպելու են մասնակցել Երեւանում կայանալիք Սերժ Սարգսեանի հանրահաւաքին:

ՎԱՐԱՆ ՅՈՎՐԱՆՆԻՍԵԱՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՇՊԱՇՏՈՒՑ

Նախագահի թեկնածու Դաւիթ Յովսէփեանի Երեւանի անդամ վահան Յովհաննիսեանը յայտարարել է, որ հրաժարուում է Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահի պաշտօնից:

Վահան Յովհաննիսեանի տարածած յայտարարութեան մէջ ասուած է. «Տարաբնոյթ ընտրական խախտումները, ընտրակաշառքի համատարած բաժանումը, որոշ տեղամասերում կողմի տեղափոխումը, լցոնումները էլ աւելի խորացրին հասարակութեան մէջ ընտրութիւնից ընտրութիւն արմատաւորուող կասկածամտութիւնը եւ անվստահութիւնը»:

ՐԱՖՖԻ ՅՈՎՐԱՆՆԻՍԵԱՆ. «ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԲԱԼԱՐԱՐԵՑԻՆ ԻՐԱՎԱՆ ԸՆԿՈՒՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ»

«Հայաստանում անհրաժեշտ է, որ գործի օրէնքը, որ իշխի իրաւունքը, եւ որ այս յետընտրական վիճակը հանգուցալուծուի ոչ թէ Եւրոպայի կամ Արեւմուտքի սիրով, այլ մեզ համար, հայերիս, հայաստանցիներիս համար», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեանը:

«Այս ընտրութիւնները, ակնյայտ է, չբաւարարեցին իրական հայկական չափանիշները, եւ յոյս ենք տածում, որ իւրաքանչիւր հայաստանցու սահմանադրական իրաւունքը՝ արտայայտուելու, հաւաքուելու, բողոքարկելու, կը պաշտպանուի արժանաւոր, եւ որ Սահմանադրական դատարանը, երբ լսի բողոքարկումը, համալիր, ամբողջական քննարկումից յետոյ կ'արձակի այդ վճիռը, որը Հայաստանի ապագայի առաջ կը բացի օրինակաւորութեան, ժողովրդավարութեան եւ քաղաքացիական իրաւունքի դռները», - յայտարարեց Րաֆֆի Յովհաննիսեանը:

Արթուր Սաքունցը բոլորին կոչ է անում հարկադրաբար չզնալ: «Իսկ եթէ աշխատանքից հեռացնեն», - «Ա1+»-ի դիտարկմանը՝ Արթուր Սաքունցը հակադրեց. «Մէկին հեռացրեցին, երկուսին հեռացրեցին, հո՞ բոլորին չեն կարող հեռացնել»:

Արդեօ՞ք ՀՀ քաղաքացիները կարող են վստահ լինել, որ հայ իրաւապաշտպանները կը կարողանան պաշտպանել մարդկանց իրաւունքները՝ այս հարցին Արթուր Սաքունցը պատասխանեց՝ անպայման եւ օրինակ է բերեց Փետրուարի 21-ին տեղի ունեցած միջադէպը. «Վանաձորցիներին Երեւան հանրահաւաքի բերող մարդկանց մեքենան կանգնացրել էին պետավտոտեսուչները ընդ որում առանց որեւէ հիմնաւորման, քաղաքացիները ահազանգել էին մեզ, մենք արդէն դիմել ենք դատախազութիւն»:

Ու այսօր, ըստ նրա, Երեւան չհասած քաղաքացիները պատրաստ են ցուցմունք տալ, որ իրենց ազատ տեղաշարժուելու իրաւունքը ոտնահարուել է:

ՆՈՐԻՑ ԵՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ԱԶԱՏ ԱՐՏԱԿԱՅՈՒՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՐ, ՈՒՆԱՀԱՐՈՒՆԵՑ ԵՒ ՎԻՐԱՎՈՐՈՒՆԵՑ ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹՅԱՆ:

ՀՅԴ Գերագոյն մարմինը մանրամասն ուսումնասիրում է բոլոր մարզերից, ընտրատեղամասերից ստացուող զեկոյցները, որոնց հիման վրայ կը տայ իր գնահատականները եւ հանդէս կը գայ համապատասխան յայտարարութեամբ:

Սակայն, անկախ այդ գնահատականից, ես կայացրել եմ իմ անձնական որոշումը: Ես հրաժարուում եմ ՀՀ Աժ փոխնախագահի պաշտօնից»:

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ.

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԴԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԵՆ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ, ԲԱՑԱՍԱԿԱՆՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Նախագահական ընտրութիւնների քարոզարշաւի ընթացքում Հայաստանի հիմնական հեռարձակող լրատուամիջոցները դրական են լուսաբանել վարչապետ Սերժ Սարգսեանին, իսկ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը բացասական լուսաբանման է արժանացել: Նման արդիւնք է տուել Երեւանի մամուլի ակումբի եւ «ԹԻՄ» հետազոտական կենտրոնի մոնիտորինգը, որն անցկացուել է ողջ քարոզարշաւի ընթացքում:

«Այսքան բեւեռացուած լուսաբանում նոյնիսկ 96 թուականին չի եղել», - «Ազատութիւն» ռադիոկայանին այսօր ասել է Երեւանի մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նաւասարդեանը:

Հայաստանի հանրային հեռուստատեսութեան, ԱԼՄ, «Արմենիա», «Հայկական երկրորդ հեռուստալիք», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ» հեռուստակայանների եւ Հայաստանի հանրային ռադիոյի հաղորդումների ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ Սերժ Սարգսեանի լուսաբանման 1384 դէպքերից 264-ը եղել է դրական, իսկ 60-ը բացասական, մինչդեռ Լեւոն Տէր-Պետրոսեանի լուսաբանման 1232 դէպքերից 406-ը եղել է բացասական, իսկ 22-ը՝ դրական:

Վերլուծաբանները փաստում են, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը Սերժ Սարգսեանից գրեթէ 7 անգամ աւելի բացասական է ներկայացուել: Տէր-Պետրոսեանին վերա-



Բորիս մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նաւասարդեան

բերող նիւթերի շատ մեծ մասը, շատ մեծ տոկոսը վարկաբեկիչ բովանդակութիւն ունէին:

Հայաստանի հանրային հեռուստատեսութեամբ Լեւոն Տէր-Պետրոսեանի լուսաբանման 153 դէպքերից 63-ը եղել է բացասական, իսկ դրական լուսաբանում ընդհանրապէս չի եղել:

«Եթէ նախորդ ընտրութիւններում քիչ թէ շատ միջազգային ստանդարտներին համապատասխան էր գործում Հանրային հեռուստատեսութիւնը, այս անգամ այն լաւագոյն դէպքում ոչ մի բանով չէր տարբերում մասնաւոր հեռուստաընկերութիւններից, եթէ չասենք, որ նրանցից էլ աւելի կողմնակալ էր», - փաստել է Բորիս Նաւասարդեանը:

Լեւոն Տէր-Պետրոսեանի ամենաբացասական լուսաբանումն իրականացրել է «Կենտրոն» հեռուստակայանը:

«ՊԱՏԿԵՐԱՑՈՒՔ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ Է»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Փորձագէտ Մեսրոպ Յարութիւնեանը խորհուրդ է տալիս բոլոր նրանց, ովքեր նեարդաչնանում են Հայաստանի հեռուստաընկերութիւնների լրատուական թողարկումները նայելիս, խնայել նեարդերը:

«Պատկերացրէք, որ օրինակ՝ դիտում էք՝ «Կենդանիների աշխարհում» կամ զաւեշտալի հաղորդում եւ ծիծաղէք», - ասում է փորձագէտը: Ըստ նրա՝ իրեն զանգուում են ամենահեռաւոր մարզերից ու հարցնում, եթէ Սերժ Սարգսեանը յաղթել է, ինչու են «քէֆ անելու փոխարէն, այդպիսի թատրոններ սարքում»: Յիշեցնենք, որ արդէն մի քանի օր է հանրապետութեան տարբեր քաղաքներում կազմակերպւում են ի պաշտպանութիւն Սերժ Սարգսեանի ցոյցեր, եւ երեւանեան գրեթէ բոլոր հեռուստաընկերութիւնները, ներառեալ Հանրայինը, ցոյց են տալիս համարեալ 10-րոպէանոց տեսանիւթեր, որոնցում ՀՀ քաղաքացիները աւելի շատ ոչ թէ ներկայացնում են իրենց ընտրեալի արժանիքները, այլ հակաքարոզութիւն են անում Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ: Անգամ ոչ պրոֆեսիոնալ աչքը նկատում է, որ հակաքարոզութիւն անողները անգիր են արել իրենց տեքստը եւ բնաւ չեն չուզում տեսախցիկից: Ի դէպ, նոյն տեսանիւթը ցուցադրուում է մի քանի հեռուստաընկերութիւններով:

Հակառակ սրա՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները ներկայացուում են ամենավիրաւորական որոշիչներով: Ընդ որում, այս

գործին լծուել է Ոստիկանութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան վարչութիւնը: Հետաքրքիր է նաեւ այն, որ ոստիկանութեան հաղորդագրութիւնները, որոնք տարածուում են լրատուամիջոցներին ու դրուում ոստիկանութեան կայքում, յանկարծ այլ են դառնում՝ եթերում՝ շաղախուած ամէն տեսակի անկանխելի: Օրինակ՝ Գլխաւոր դատախազի նախկին օգնական Գագիկ Ջանգիրեանի բերման ենթարկելու մասին հաղորդագրութիւնը բոլորովին այլ տեսք էր ստացել հեռուստատեսային տարբերակում: Մասնաւորապէս՝ եթերից այդպէս էլ չհնչեց, որ Գագիկ Ջանգիրեանի եւ նրան ուղեկցողների մեքենաների ստուգելու ժամանակ «ԿՀԴՊ ԳՎ յատուկ նշանակութեան վարչութեան աշխատակից Ռաֆիկ Մուրադեանի հաշուեցուցակային գէնքից անգուշաբար կրակոցներ են արձակուել, ինչի հետեւանքով թեթեւ մարմնական վնասուածքներ են ստացել նոյն վարչութեան աշխատակից Գէորգ Մալխասեանը, 3-րդ վարչութեան աւագ օպերլիազոր Տիգրան Կարապետեանը եւ դիմադրութիւն ցուցաբերած Վարդան Ջանգիրեանը»:

Մեր դիտարկմանն ի պատասխան՝ Մեսրոպ Յարութիւնեանը կրկնեց վաղուց արուած իր դիտարկումը, որ Ոստիկանութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան վարչութիւնը չի տարբերում լրատուութիւնը քարոզչութիւնից, եւ այն ինչ արւում է քարոզչութիւն է:

ԼՈՒՐԵՐ

HUMAN RIGHTS WATCH-Ը ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԱՆՅԱՊԱՂ ԴԵՏԱՔՆՆԵԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ԲՈՆՈՒԹԵԱՆ ԴԵՊՔԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Human Rights Watch միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը այսօր հանդէս է եկել յայտարարութեամբ, որում Հայաստանի իշխանութիւններին կոչ է անուած անյապաղ հետաքննել Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների ընթացքում դիտորդների եւ լրագրողների նկատմամբ տեղ գտած բռնութեան դէպքերը:



«Ընտրութիւնների օրը այս յարձակումների թիրախը դարձել են հենց այն մարդիկ, ովքեր փորձել են ապահովել քուէարկութեան օրինական ընթացքը», - յայտարարել է Human Rights Watch-ի Եւրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով տնօրէն Ջոլի Քարթնըրը՝ յաւելելով. - «Հայաստանի իշխանութիւնները պէտք է անկախ եւ շուտափոյթ հետաքննութիւն անցկացնեն՝ ապահովելու արդարութեան վերականգնումը եւ շեշտելու, որ մարդկանց վախեցնելը Հայաստանում անհանդուրձան է»:

«ԼԵՒՈՆ, ՆԱԽԱԳԱՅ»՝ ԿՈՉԵՐ ՓԱՐԻԶՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Փարիզի ոստիկանապետի կողմից արտօնուած 4- ժամեայ բողոքի ցոյց է տեղի ունեցել Փարիզի հայկական դեսպանատան առջեւ, որին մասնակցել են մօտ 30 տարբեր տարիքի, մասնագիտութեան տէր ՀՀ քաղաքացիներ:



Հայաստանի քաղաքացիներու բողոքի ցոյցը Փարիզի հայկական դեսպանատան առջեւ

Պաշտօնական բողոք-նամակ է յանձնուել հիւպատոս պրն Վահրամեանին, որը թէ նամակը, թէ մասնակիցներին ընդունել է պատշաճ կերպով: Յոյցի ընթացքում ուսանողների կողմից հնչել են հետեւեալ յայտարարութիւնները. նրանք չեն պատրաստուում իրենց գիտելիքները ներդնել մի երկրում, որտեղ իշխում է անօրինականութիւնը եւ որ պայքարելու են մինչեւ վերջ Հայաստանում օրինականութեան եւ ժողովրդավարութեան վերականգնման համար:

Մարդիկ վանկարկում էին ֆրանսերէնով՝ «Լեւոն, նախագահ»: «Յոյցից յետոյ եղան մի քանի տասնեակ զանգեր, մարդիկ ցանկանում են միանալ մեր շարժմանը եւ առաջարկում իրենց օգնութիւնը: Այժմ պլանաւորում են հետագայ անելիքները», - «Ա1+» - ին յայտնեց ցոյցի մասնակից Ժիրայր Թորգոմեանը:

ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՑՈՅՑ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

մապատասխանէր իրականութեան եւ միացաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի պահանջին՝ անվաւեր ճանաչելու ընտրութիւնները:

Հանրահաւաքը Հայաստանի կառավարութեան պահանջեց անյապաղ ազատ արձակել քաղաքական բանտարկեալներուն, անմիջապէս դադարեցնել քաղաքական հետապնդումները եւ վերջ տալ տեղեկատուական շրջափակումին:

Հանրահաւաքը վարեց Ընկ. Տօթթ. Համբիկ Սարաֆեան: Ելոյթ ունեցան, «Վարագոյր» յայտագրի ղեկավար Ռուտիկ Յովսէփեան, ազատամարտիկ Հրանդ Թումասեան, «Նոր Սերունդ» հեռուստա-ժամի հաղորդավար Յարութ Տէր-Դաւիթեան, Լեւոն Տէր-Պետ-

րոսեանի գորակցութեան Լոս Անճելըսի շտաբի անդամներ Արմէն Բարսեղեան եւ Խաչիկ Խուտիկեան, ասմունքող Նունէ Աւետիսեան, գաղութի ծանօթ հաղորդավար Անահիտ Մարտիրոսեան, իրաւաբան Կարօ Կարապետեան, Մատեան Անկախութեան ֆիլմի հեղինակ Լեւոն Մկրտչեան եւ «Քաջ Նազար» ամսագրի խմբագիր Յովհաննէս Պալեան, որ եկաւ հրապարակաւ հրաժարելու մի քանի տարի առաջ Ռոբերդ Քոչարեանի կողմէ իրեն յանձնուած Մովսէս Խորենացիի անուան շքանշանէն:

Հանրահաւաքը աւարտուեցաւ պայքարը շարունակելու պատրաստակամութեամբ եւ իր տրամաբանական աւարտին հասցնելու վճռակամութեամբ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՆՈՅՆ ԹԱՓՈԿ

Շարունակուած էջ 1-էն

վր»: Ըստ «Ազատութիւն» ռատիոկայանի, ցարդ ամենէն բազմամարդ այս հանրահաւաքին մարդիկ կանգնած էին շատ խիտ, փակուած էր Թումանեան փողոցը, լեփ-լեցուն էին Օփերայի շրջակայքի սրճարաններու տարածքները: Հանրահաւաքը սկսելէ մօտ կէս ժամ ետք Հիւսիսային պողոտայով դէպի Ազատութիւն հրապարակ սկսան շարժիլ ի պաշտպանութիւն Սերժ Սարգսեանի Հանրապետութեան հրապարակի վրայ կազմակերպուած հանրահաւաքի մասնակիցներու մէկ մասը՝ «Առաջ, Հայաստան» դրօշներով: Անոնցմէ մի քանիսն հասան մինչեւ հարթակ եւ Տէր-Պետրոսեանին յանձնեցին դրօշները:

«Ձեռնարկուածները ազատ կամքով գալիս են դէպի ազատութիւն», - հարթակէն յայտարարեց անոնցմէ մէկը:

Տէր-Պետրոսեան ապա ըսաւ, թէ «պարզեւտրելու է Սերժ Սարգսեանին». - «Որովհետեւ նրա շնորհիւ, նրա կազմակերպած հանրահաւաքի շնորհիւ Ազատութեան հրապարակի հանրահաւաքը կրկնապատկուեց»:

Այս հանրահաւաքի կարգախօսը դարձաւ «Ազատ Անկախ Հայաստան»-ը, որ ժողովուրդը կը վանկարկէր միաբերան, թնդացնելով ամբողջ Երեւան քաղաքը: Բնականաբար կը հնչէին նաեւ մնայուն կարգախօսերը՝ «Պայքար, պայքար մինչեւ վերջ», «Լեւոն նախագահ» եւ Սերժիկ հեռացիր:

Ինչ կը վերաբերի Սերժ Սարգսեան հանրահաւաքին, ան տեղի ունեցաւ Հանրապետութեան հրապարակին վրայ: Վարչապետը յայտարարեց, որ իշխանութիւնները պատրաստ են համագործակցելու ընդդիմադիր բոլոր ուժերու հետ:

«Ես այս բարձր ամբիոնից դիմում եմ նախկին թեկնածուներին եւ նրանց սատարած քաղաքական ուժերին. եկէ՛ք համագործակցե՛նք: Ընդհուպ մինչեւ կողմից ին կառավարութեան ձեւաւորում: Նպատակներիցս մէկն է՝ օգտագործել բոլոր կառուցողական, հիմնականից ուժերին՝ ի նպաստ Հայաստանի զարգացման», - յայտարարեց Սերժ Սարգսեան:

«Ես համագործակցութեան կոչ եմ անում երկրի բոլոր քաղաքական ուժերին ու հասարակական միաւորումներին: Իշխանութիւնը պատրաստ է համագործակցելու ընդդիմադիր բոլոր ուժերի հետ յանուն Հայաստանի զարգացման եւ ի բարեկեցութիւն Հայաստանի Հանրապետութեան ժողովրդի», - աւելցուց Սերժ Սարգսեան:

Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները պաշտօնապէս չարձագանգեցին այս առաջարկին:

Ընդդիմութիւնը իր կեցուածքը կ'ամփոփէ նախագահական ընտրութիւնները չեղեալ յայտարարելու պահանջով, որու համար ալ կը պատրաստուի դիմելու Սահմանադրական Դատարան:

Կողմերու միջեւ երկխօսութեան առաջարկով հանդէս եկաւ նաեւ

ԵԱՀԿ-ի գործող նախագահ, Ֆինլանտայի արտաքին գործոց նախարար Իլկա Կաներուա: Ան փետրուար 26-ին Երեւանի մէջ կոչ ըրաւ բոլոր կողմերուն սկսիլ երկխօսութիւն՝ Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւններէն յետոյ ստեղծուած լարուածութիւնը մեղմելու համար: «Երկխօսութիւնը եւ համագործակցութիւնը ԵԱՀԿ-ի սկզբունքներն են, եւ ես կոչ կ'ընեմ ձեզի, օգտագործել այդ արդիւնաւէտ գործիքները Հայաստանի առջեւ ծառայած մարտահրաշխաններուն դիմակայելու համար», - ըսաւ ԵԱՀԿ-ի գործող նախագահը:

Անդրադառնալով ընտրութիւններէն յետոյ Երեւան մէջ ծայր առած բողոքի ցոյցերուն, Իլկա Կաներուա ըսաւ. - «Ես կը հաւատամ, որ իշխանութիւնները կը շարունակեն յարգել ազատօրէն հաւաքուելու մարդկանց իրաւունքը եւ կ'ապահովեն հրապարակային հաւաքներու անցկացումը՝ առանց խոչընդոտներու»:

Ինչ կը վերաբերի ձերբակալութիւններուն, իշխանութիւնները փետրուար 23-ին սկսան «առեւանգել» Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակից յայտնի գործիչներուն:

Ձերբակալուածներու շարքին են ՀՀ զլխաւոր դատախազի նախկին տեղակալ եւ ռազմական ոստիկանութեան նախկին դատախազ Գագիկ Զհանգիրեան, որ օր մը առաջ հրաժարելով իր պաշտօնէն եկաւ միանալու Շարժումին: Դիմակալուոր անձիք Զհանգիրեանի մեքենան կեցնելով իր հետ տարին նաեւ եղբայրը՝ Վարդան Զհանգիրեան:

Ձերբակալուեցաւ նաեւ «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհուրդի անդամ, Պետեկամուտներու նախկին նախարար Սմբատ Այվազեանը, «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանը, «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէեանը, Լեւոն Տէր Պետրոսեանի Գլխավոր շտաբի անդամ Աշոտ Զաքարեանը:

Փետրուար 24-ի լոյս 25-ի գիշերը Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) խումբ մը աշխատակիցներ խուզարկած են ՆԺԿ կենտրոնական գրասենեակը, ոչինչ չգտնելով՝ անոնք կնքած եւ իրենց հետ տարել են համակարգիչները:

Դատախազութեան աշխատակիցները խուզարկած են նաեւ «Ղարաբաղ» կոմիտէի անդամ Սամուէլ Գէորգեանի տունը: Փետրուար 25-ի երեկոյեան, Կենտրոնի ոստիկանութիւն բերման ենթարկուած է նաեւ «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհուրդի անդամ Սուրէն Սուրէնեանցը:

Ոստիկանները փորձեցին նաեւ զինաթափ ընել ՀՀ առաջին նախագահ Լ. Տէր-Պետրոսեանի թիկնազօրի անդամները, բայց անոնք հրաժարեցան յանձնել իրենց պաշտօնական զէնքերը՝ յայտարարելով, որ օրէնքով, որպէս առաջին նախագահի թիկնազօրի անդամներ, իրենք զէնք կրելու իրաւունք ունին:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ  
ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

www.massisweekly.com

**ԱԶԳԱՅԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԹԱՓ ԱՌԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ  
ՆԿԱՐՆԵՐՈՎ**



*The Quality and Safe Choice for Your Child's High School Education*

**AGBU HIGH SCHOOL – PASADENA**

***OPEN ENROLLMENT FOR 2008-2009***

***Grades 9-12***

**The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.**

**Please call (626) 794-0363**

ԱԶԳԱՅԻՆ

ԴԵՊԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԱՊԱՐԱԿ

ՅԱՐՈՒԹՅՆ ԴԱԻԻԹԵԱՆ

Հակառակ բազում հաւաստի-ացումներու, համոզուած չէինք որ ընտրութիւնները առանց կեղծիք-ներու պիտի կայանային: Յստակ էր որ բացառապէս օրինախախտում-ներով իշխանութեան հասած ու վախի միջոցով տիրապետու-թեամբ զայն պահող մարդոցմէ, այդպիսի բարի կամոցողութիւն ակնկալելը պարզապէս միամտու-թիւն պիտի ըլլար: Հետեւեալը, ընտրութեան արդիւնքէն աւելի, մենք լարուած մտազոհութեամբ եւ հետաքրքրութեամբ կը սպասէինք թէ ի՞նչ պիտի ըլլար ժողովուրդի անդրադարձը, հակազդեցութիւնը: Տէր պիտի կանգնէ՞ր իր ձայնին, թէ դարձեալ պիտի լուրջ ու յանձն-ուէր ինչպէս պատահեցաւ յատկա-պէս նախորդ 2 նախագահական ընտրութիւններուն:

Դատելով այս մի քանի օրերու զարգացումներէն, մենք կը տես-նենք որ Ազատութեան հրապարակ ելած ժողովուրդը վերագտած է այն ոգին, որ մեզ հասցուց Արցախ-եան նուաճումին: Ըմբոստութեան ոգին՝ ծառանալու անիրաւութեանց դէմ: Վճռակամութեան ոգին՝ միա-ւորուած պայքարի ճամբով վերա-տիրանալու իր արդար իրաւունք-ներուն: Այս գիտակցութիւնը շատ էական ու յատկանշական արժէք կը ներկայացնէ համաժողովրդա-կան շարժման յաղթանակին հա-մար, բոլորս ապագային համար եւ տեսնելով այս շաժուած ներուժը (potential), հայ թէ օտար, ներքին թէ արտաքին ուժեր անտեսելով բացառապէս իսրայէլականութիւններն ու կեղծիքները, իրենց անապարանօք շնորհաւորանքներով կը փորձեն կոտրել անոր թափը: Բայց մենք պէտք է քաջ գիտակցինք որ ոչ թէ այդ ուժերը (որքան ալ հզոր ըլլան անոնք), այլ մեր սեպհական ժողո-վուրդի ոգին, ազատ կամքի ար-տայայտութիւնն ու վճռակամու-թիւնը, մեծագոյն գրաւականներն են մեր ազգի ու պետականութեան գերիշխանութեան: Մեր մօտ անց-եալի դէպքերը բաւարար դաս պէտք է ըլլան բոլորիս համար որ ո՛չ վստահինք ու ո՛չ ալ տարուինք ասոր ու անոր խոստումներուն, այլ հիմնուինք մեր սեպհական ժողո-վուրդի ուժին վրայ: Զլատելու համար ժողովուրդի ոգին ու վճռա-կամութիւնը, այդ ուժերը կը փոր-

ձեն համաժողովրդական շարժումը անձնականացնել, վերածել անձնա-ւորութիւններու բախումի եւ այս-պիսով տարանջատել ու տկարաց-նել մեզ: Մենք պիտի չիցնանք այդ խաղին մէջ, որովհետեւ ինչդիրը այս կամ այն անձի իշխանութեան գալու ինչդիր չէ, այլ՝ գաղափարա-կան պայքարի: Խնդիրը ժողովուր-դի ազատ կամքի արտայայտու-թեան բռնաբարումն է: Խնդիրը ժողովուրդի ձայնին եւ իրաւունք-ներուն ոտնակոխումն է: Խնդիրը ժողովուրդի ստրկացումն է ազնիւ տիպական չունեցող մարդոց կողմէ, որոնք իրենց անձնական ու անմի-ջական շահերուն համար կը գոհնեն ժողովուրդի արժանապատիւ ապա-զան եւ կը խորխուրեն մեր պետակա-նութեան գերիշխանութիւնը: Ահա թէ որն է ինչդիրը, որ պէտք է լուծենք մենք, այսօր, միաւորուած ուժերով:

Հազարամեակներու մեր պատ-մութիւնը վկայ է, որ մենք երբ միաւորուած եղած ենք յստակ գա-ղափարի մը շուրջ, թէկուզ օտարի լծին ենթակայ, մեր պայքարը յաղ-թանակով պսակած ենք: Վկայ՝ Ոսկեդարը: Վկայ՝ Մարդարապատի խոյանքը: Վկայ՝ Արցախեան հերո-սամարտը: Այնքան ատեն որ մենք գօտեպնդուած ենք գաղափարի ոգի-ով ու կը մնանք միաւորուած յաղթանակը մերը պիտի ըլլայ: Այնպէս որ մենք ամէն գնով թի-կունք պիտի կանգնինք Ազատու-թեան Հրապարակի վրայ մեր եղ-բայրներուն եւ քոյրերուն, շարու-նակելու իրենց պայքարը, յանուն ժողովրդավարութեան, յանուն ար-դարութեան, յանուն արժանապա-տուութեան, յանուն ազատութեան: Իրենց պայքարը մեր ալ պայքարն է: Որովհետեւ հայրենիքէն հազա-րաւոր մղոններ հեռու, եթէ մենք պիտի գոյատեւենք որպէս հայ, մեր ամենամեծ գրաւականը ազատ, անկախ, ժողովրդավար գերիշ-խան եւ հզոր Հայաստան մը ունե-նալն է:

Փոխանակ ժողովուրդի մէջ այս գաղափարները արմատաւորե-լու, կը ցաւինք երբ կը կարդանք կուսակցամով նեղմտութեան ար-դիւնք հետեւեալ տողերը, «Տարա-կուսանքէ վեր է, (ընդգծումը մեզ-մէ, Յ.Տ.Դ.) որ վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան առաջին եօթը-ութը տարիները եղան մութի ու ցուրտի, անկումի եւ հրասթափութեան, աւերման ու

աւարումի դառն եւ դաժան ժամա-նակներ»: (Ապարէզ, Փետրուար 2, 2008 Ն. Պէրպէրեան): Պատմու-թեան գիտակ ունէ ազնիւ մտաւո-րական չի կրնար չտեսնել, որ ապագայ սերունդները երբ յետա-դարձ նայուածքով պիտի նային Հայաստանի Գ. Հանրապետութեան առաջին 7-8 տարիներուն, հոն ոչ թէ պիտի տեսնեն մութն ու ցուր-տը, այլ՝ Արցախեան հերոսամար-տը: Իրենց հոգիները պիտի չմթազ-նին մութի ու ցուրտի օրինակէն, այլ՝ պիտի փայլատակեն Արցախ-եան հերոսամարտի նուաճումով: Անոնք որոնք այսօր կը շեշտեն մութն ու ցուրտը, անոնք մեր ժողովուրդի ոգին կը փորձեն մթազ-նել:

Կը ցաւինք, երբ կը շարունա-կենք կարգալ այդ նոյն գրչին, թէ «Նոյնպէս անկասկած է (ընդգծումը մեզմէ, Յ.Տ.Դ.) , որ 1998ի իշխա-նափոխութեամբ Հայաստանի ու հայ իրականութեան մէջ սկսաւ պետական-քաղաքական եւ ընկե-րատնտեսական բարեկարգումնե-րու հանգրուան մը, որ վաղուան բարգաւաճ օրուան նկատմամբ յոյսն ու հաւատքը վերադարձուց մեր ժողովուրդին»: Դարձեալ մեր հա-մոգումով, ապագայ սերունդները 1998 իշխանափոխութեան յաջոր-դող շրջանին նայելով, պիտի փի-տսան Հոկտեմբեր 27, 1999ի անո-րակելի սպանդով մեր պետակա-նութեան հասցուած ահաւոր հար-

ուածին, որ «վաղուան բարգաւաճ օրուան նկատմամբ յոյսն ու հա-ւատքը» մթազնեց: Մենք կը զար-մանանք, որ սկզբունքայնութիւն քարոզող մարդիկ, լուռ կ'անցնին իրենց ընկերոջ անիրաւ սպաննու-թեան դէպքի վրայէն: Լուռ կ'անց-նին իրենց թեկնածուին տրուած ձայներուն իշխանութեան թեկնած-ուին կողմէ զաւթումի փաստին վրայէն, եւ այս բոլորը յանուն իշխանական աթոռներու եւ շա-հերու: Ո՞ւր գնաց գաղափարական պայքարի վստահութիւնը: Ի՞նչ ար-ժանապատիւ ապագայ կրնանք կեր-տել այսպիսի մանրուք մտայնու-թեամբ ու վարքով:

Այսօր բացառապէս է բոլորիս համար թէ ինչպիսի՞ խարդախու-թիւններով, բռնամիջոցներով, սպառնալիքներով ու վախի միջո-ցով մէջ ընթացան նախագահա-կան ընտրութիւնները: Երբ սուտն ու կեղծիքը ակններեւ են, մեր առջեւ կը բացուին երկու ճամբա-ներ: Կամ գլուխ ծռել որ կը նշանակէ ստրկանալ: Եւ կամ ընդվ-զիլ, որ կը նշանակէ պայքարիլ: Երբ քաջ գիտենք, որ սուտն ու կեղծիքը արժանապատիւ ապագայ չեն կերտեր, ուրեմն մեզի կը մնայ ընթանալ պայքարի ճամբով: Դէ-պի Ազատութեան Հրապարակ, Յա-նուն ժողովրդավարութեան: Յա-նուն Արդարութեան, Յանուն Ար-ժանապատուութեան: Յանուն Ազա-տութեան:

Յովհաննէս Բալայեանի Յայտարարութիւնը

Սոյն յայտարարութիւնը կատարուել է Կիրակի, Փետրուար 24, 2008 թ. Հոլիվուտի «Փոքրիկ Հայաստանում» տեղի ունեցած հաւաքի ընթացքում, 15,000 ժողովրդի առջեւ:

Նկատի ունենալով որ Հայաստանի իշխանութիւնները մի անգամ եւս փորձում են խեղդել մեր ժողովրդի ազատ կամքով արտայայտուելու աստուածատուր իրաւունքները, մենք այստեղ հաւաքուած ենք մեր բողոքի ձայնը բարձրացնելու յանուն արդարութեան:

Ինչպէս գիտէք, մի քանի տարիներ առաջ Ռոբերտ Քոչար-եանը ինձ շնորհեց Մովսէս Խորենացու անուան շքանշանը: Նկատի ունենալով որ Մովսէս Խորենացին մեր Պատմահայրն է եւ մեր ազգային ինքնութեան գլխաւոր կերտիչը, ես չեմ կարող այդ Մեծ Հայր անունը կրող շքանշանը ստանալ մի անձից, որը իմ ժողովրդի արդար իրաւունքներն է բռնաբարում:

Հետեւեալը, ես ձեր բոլորի ներկայութեամբ վերադարձնում եմ այդ շքանշանը ի նշան բողոքի, Հայաստանում կայացած խայտառակ եւ անիրաւուած նախագահական ընտրութիւնների: Ես հոգեկան մեծ ցասումով եմ կատարում այս գործը: Ես միշտ կանգնած եմ իմ ժողովրդի, իմ հայրենիքի կողքին, որովհետեւ երկուքն էլ ինձ համար սրբութիւններ են:

Վստահ եղէք, արդարութիւնը պիտի յաղթէ:

Յովհաննէս Բալայեան

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS

ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS.

authentic cuisine  
full hookah bar  
VIP membership  
full cocktail bar  
live belly dancing  
live music and DJ

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒԱԾ ՕՐԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԲԱՆ

Աշխարհի ներկայ կացութեան մէջ, օրեր եւ շաբաթներ կան երբ բացառիկ կարեւորութիւն ստացող երեւոյթներ չեն պատահիր: Կան նաեւ օրեր եւ շաբաթներ որոնք, ընդհակառակը լի են նշանակելի, հետաքրքրական, երբեմն ալ վտանգաւոր զարգացումներով:

Նման շաբաթ մըն է որ աշխարհ կը բոլորէ: Մէկ կողմէ կան դրական զարգացումներ, ինչպիսիք են անջրպետի գիտական օգուտները, աստղաբանութիւնը եւ անոնց մէջի աստղաբանութիւնը իրապէս յաջող թուիչ քննարկով, Ամերիկայի նախագահ Պոլ Ռիֆի կայացուցած թեմաքննարկներն են, այս անգամ հինգ երկիրներ, ուր կան բացի աղքատութեան համատարած երեւոյթէն, «էյտոյ» եւ Մալթայի մտահոգիչ վարակումները, եւ անոնց վերացման գծով, այս մեծ երկրի յատկացնելիք մեծագումար նպաստները: Այս դրական երեւոյթներու կողքին, կան բացառիկ ուրիշներ ալ, որոնք ուղղակի մտահոգիչ կը շարունակեն մնալ: Առաջին կարգի վրայ կը մնան Իրաքն ու Աֆղանիստանը, որ ահաւասիկ աւելի քան հինգ տարիներէ ի վեր, ուղղակի պատերազմական մտահոգիչ վիճակ կայ, առանց տաճնապնդու լուծման մը կարելիութեան: Իրաքի պարագային, Ամերիկա միտնուած է անվերջանալի թուացող անորոշ կացութեան մը մէջ, որմէ դուր ելլելը, նոյնիսկ յարաբերական հանդարտեցումի մը հաւանականութեամբ, գէթ առ այժմ անկարելի կը թուի: Հասկնալիօրէն, Իրաքեան թնձուկը իր ուղղակի եւ ժխտական անդրադարձերը կ'ունենայ Ամերիկայի ներքին կեանքէն ներս, եւ Իրաքը կը մնայ տեղի ունեցող նախագահական ընտրութեան գլխաւոր մտահոգութիւններէն մէկը: Ուրիշ հարցեր ալ կան անշուշտ Ամերիկան մտահոգող տնտեսական մտահոգիչ կացութիւնը, հազարաւոր մարդկանց տուններու գրաւումը (foreclosure) վճարումներու անկարողութեան պատճառաւ: Դրամատուներու կացութիւնը նոյնպէս մտահոգիչ է, եւ անոնցմէ շատեր արդէն իսկ անկարողութեան մէջ կը գտնուին քաղաքացիներու համար փոխառութեան եւ պարտքերու ստացման տեսակէտներէն: Իրաքը, Աֆղանիստանը, տնտեսական տաճնապնդ եւ ասոնց վրայ աւելցնելով ազգային ապահովութեան խնդիրը, իր պահանջած ահաբեկչական պատերազմի ծախսին ու պարտաւորութիւնները մէկ կողմէ, իսկ ներգաղթային յատուկ քաղաքականութեան մը բացակայութիւնը միւս կողմէ, երկիրը կը պահեն մտահոգիչ եւ վտանգաւոր կացութեան մը մէջ: Այս բոլորը անշուշտ կ'անդրադառնայ երկրէն ներս մտահոգութեան, մասնաւորաբար եթէ նկատի առնուին նախագահական թեկնածուներու մօտ տիրող քարոզչական լուրջները, ոմանց մօտ տարիներու ընթացքին ձեռք ձգուած փորձառութիւնը, որ կը հակադրուի փոփոխութեան անհրաժեշտութեան: Փորձառութեան եւ ազգային ապահովութեան սկզբունքներու ջատագով են Հիլըրի Բլիթընը, տեմոքրատներու ձեռնարկներ, եւ ճոն Մքքէյնը, հանրապետական կուսակցութեան, ըստ երեւոյթին, նախագահութեան թեկնածուն: Այս վերջինը, որ երթալով իրեն կող-

քին արտայայտողներ կ'ունենայ, իր նախկին մրցակից Միթ Ռոմնին, եւ նախկին նախագահ, ճորճ Պուշը: Հիլըրիի պարագային, ան տակաւ կը կորսնցնէ իր սկզբնական յառաջախաղացքը, առաջին տեղը լքելով Պարաք Օպամային, որուն ճարտասանական շնորհքները, եւ փոփոխութեան մը անհրաժեշտութեան մասին ինքնավստահ արտայայտութիւնները լուրջ յաջողութիւն մը կ'ունենան յատկապէս երիտասարդներու եւ իր ցեղակիցներու մօտ: Երբ այս տողերը կը գրուին, հաւանականութիւնը կայ որ Օպաման առաջին տեղը գրաւէ իր կուսակցութեան նախագահական ցանկի վրայ, իսկ եթէ գրեթէ հաւասար թիւով պատգամաւորներ ստանան Հիլըրին եւ Օպաման, հաւանօրէն վճիռը պիտի արձակուի մէկ կամ միւսի ի նպաստ, գերապատգամաւոր նկատուած խումբին կողմէ, որոնց մօտ ալ մտահոգիչ տրամադրութիւններ ակնհայտ սկսած է դառնալ: Ի հարկէ թեկնածուներէն բոլորն ալ տակաւին յստակ բանաձեւումներ չունին թէ ինչպէս պիտի լուծեն երկրին տագնապները, եւ ի՞նչ ճակատագիր վերապահուած է իրենց անգամ մը որ հասնին նախագահութեան: Հետաքրքրական է տեսնել որ ներկայի նախագահ ճորճ Պուշը շատ ալ մտահոգ չէր երկրի թէ ի՞նչ կ'ըլլայ երկրի վիճակը, իր հրապարակէն քաշուելէն ետք: Իրաւունք ալ ունի, քանի որ իրեն համար շատ ալ

յստակ չէ թէ ինչու իրաքեան պատերազմը սկսաւ կեղծ եւ սուտ պատճառաբանութիւններով, եւ այժմ ի վիճակի չէ անհրաժեշտ լուծումներ գտնելու: Մասամբ մը կը յիշեցնէ Ֆրանսայի Լուի 14րդ թագաւորը, իր հուշակաւոր արտայայտութեամբ – «Ինձմէ ետք, ջրհեղեղ չըլլայ, խաղաղութեան մը հաւանականութիւնն ալ քիչ տիկոս ունի: Անդին ճոն Մքքէյն մը Իրաքի մէջ 100 տարի գտնուելու պարագային մասին կը խօսի, իսկ Հիլըրի եւ Պարաք, ընտրուելու պարագային, ամերիկեան գործերը Իրաքէն տուն բերելու մասին կ'արտայայտուին, առանց նկատի առնելու այս քայլի վտանգներու մասին, Իրաքէն ներս: Առ այժմ գէթ շատ խօսք չի կայ Աֆղանիստանի եւ Իրանի մասին, որոնք անշուշտ պիտի իրենց գիրենք պարզատրեն նոր նախագահին, ով որ ալ ըլլայ ան: Եթէ ասոնք բաւական չէին կարծես, Փերվեզ Մուշարաֆիի փառաստանն ալ, ըստ երեւոյթին, պիտի սկսի լուրջ մտահոգութեան արժանանալ, երբ նկատի ունենանք վերջին ընտրութեանց ընդդիմադիր ճակատի արձանագրած յաջողութիւնը: Կը խօսուի նոյնինքն Մուշարաֆիի հրապարակէն քշուելու մասին, եւ ինչ պիտի պատահի եթէ այս մէկը իրականանայ, եւ Փաքիստանը ինչպէս հակա-ամերիկեան եւ ենթադրաբար, Ալ-Քայիտեան ազդեցութեան տակ: Մօտիկ թէ հեռաւոր ապագան յիշէ փառաստանի պարագային, եւ նախատեսութիւններ ընել քիչ մը դժուար

է ներկայիս: Վստահ չենք թէ ուր պէտք է գետեղել Քուպայի եւ Քոսովոյի պարագաները: Քոսովոն իր անկախութիւնը ստացաւ եւ նոր մտահոգութիւն մը կրնայ աւելնալ Եւրոպայի կեդրոնական մասէն ներս: Ոմանք, Ամերիկան ալ մէջը, իրապէս ընդունեցին այդ փոքրիկ երկրին անկախութիւնը, իսկ ուրիշներ, ինչպէս Ռուսաստանը, շատ ալ գոհ չեն Քոսովոյի անկախութեամբ: Ինչ կը վերաբերի Քուպային, 50 տարիներու վրայ այդ երկրին վրայ տիրապետած համայնավար կուսակցութիւնը եւ անոր գերագոյն ղեկավար Ֆիտէլ Քասթրօն, առողջական պատճառներով, երկրի ղեկավարութիւնը կը յանձնէ իր կրտսեր եղբօր, Ռաուլ Քասթրօնին: Ամերիկայի համար որ կ'երագէր փոխանցում մը դէպի ժողովրդավարութիւն, Ֆիտէլէն ետք, ըստ երեւոյթին, յուսախաբուցութիւն մը պիտի արձանագրուի: Նոյնպէս մօտ ատենէն ընտրութիւններ տեղի պիտի ունենան Ռուսաստանի մէջ եւ պիտի ընտրուի նոր նախագահ: Ըստ երեւոյթին, շատ բան պիտի չփոխուի փութիւնեան համակարգէն ներս, քանի որ Փութին իշխանութիւնը իր ձեռքին մէջ պիտի պահէ իբրեւ երկրի վարչապետ: «Մանրաբեռնուած օրեր» խորագրեցինք այս յօդուածը, եւ կը խորհիմ որ պիտի արդարացնէ այս նկարագրութիւնը յօդուածին ընթացքումէն ետք: Հարց է թէ ե՞րբ աշխարհ հանգիստ շունչ մը պիտի քաշէ խաղաղութեան մասին երազելով...

SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL

OPEN HOUSES

FOR 2008-2009 SCHOOL YEAR

PRE-SCHOOL & KINDERGARTEN

Tuesday, March 11, 2008 at 7:00PM

JR. HIGH, MIDDLE & HIGH SCHOOL

Wednesday, March 12, 2008 at 7:00PM

ELEMENTARY SCHOOL 1<sup>st</sup> – 5<sup>th</sup> Grades

Thursday, March 13, 2008 at 7:00PM

2501 N. Maiden Lane, Altadena, CA 91001 - (626) 798-5020

- Serving the community for 29 years
- Accredited by Western Association of Schools & Colleges (WASC) and by Association of Christian Schools International (ACSI)
- New and beautiful 3.3 acre school campus
- Curriculum:  
*Elementary School:* We offer Armenian, Art, Bible, English, Math, Science, Social Studies, Computer, Music, Band, Physical Education, Drama, Recorder.  
*Middle & High School:* We offer U.C. approved College preparatory courses, Armenian, Art, Bible, English, American Literature, English Literature, Algebra I, Algebra II, Pre-Calculus, Physical Science, Biology, Chemistry, Physics, Civics, Health, Computer, U.S. History, World History, Band, Drama. Honors and AP courses in several core subjects.  
Pasadena City College Bridge program: We offer PCC college level courses on our campus in English, U.S. History, Political Science, and Spanish.
- High School counseling for 9<sup>th</sup> – 12<sup>th</sup> grade students.
- Exciting athletic programs.
- Extra Curricular:  
*Elementary School:* Extensive field trips, Speech Meets, Piano Festivals, Spelling Bee contests, Science Fairs, Concerts, Art Festivals, student programs for all festive and holiday occasions.  
*Middle & High School:* Extensive field trips, 7 days to the East Coast, 15 days to Armenia, overnight camping and nature hikes, Speech Meets, Piano Festivals, Spelling Bee contests, Science Fairs, Concerts, Art Festivals, student programs for all festive and holiday occasions, community services.
- Faculty and Staff: Experienced teachers, mostly credentialed or masters degrees, ACSI certified, caring and professional.
- Students: We are student centered. Each student is nourished mentally, physically, spiritually, emotionally, in a family like safe and caring environment.
- Tuition: The most affordable of private schools.

# ՊԱՐՈՒԹԱՅԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՋԻՆ ԹԵԼԵԹՈՆԸ

«ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ԵՂԻՐ, ԿԵԱՆՔ ՄԸ ՓՐԿԷ» ՆՇԱՆԱԲԱՆՈՎ ՔԱՐՈՋԱՐՇԱԻԻ ՄԵԿՆԱՐԿ Ի ՆՊԱՍՏ ՑՈՂՈՒՆԱՅԻՆ ԲԶԻՋՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄԻ ԿԵՂՐՈՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարիներու բծախնդիր ծրագրումի, ու կամաւորներու, նուիրատուներու եւ կազմակերպողներու տքնաջան աշխատանքին որպէս արդիւնք, Հայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Արձանագրութեան Հիմնարկը (ՀՈՆԱՀ) ուրախութեամբ կը յայտարարէ իր առաջին թելեթոնի կազմակերպման մասին, ինչպէս նաեւ «Հրեշտակ մը եղիր, կեանք մը փրկէ» նշանաբանով իր քարոզարշաւի մեկնարկը, Կիրակի, Ապրիլ 13, 2008-ի երեկոյեան Ժամը 4:00-8:00 «Հորիզոն» 24 Ժամ Հայկական Պատկերասփիւռի վրայ, տեղական եւ արբանեակային, ինչպէս նաեւ այլ կայաններու եւ միջոցներու փոփոխով (ման-



նափակ թիւը, գրեթէ անկարելի եղած էր միջազգային մակարդակի արձանագրողներուն մէջ գտնել հայերու պարագային յարմար համապատասխանում, որու պատճառով փոքր եւ չափահաս մեծ թիւով հայորդիներ կորանցուցին իրենց կեանքը: Այս իրավիճակը հակակշռելու նպատակով էր որ 1999-ին



րամասնութիւնները շուտով), գոյացնելու անհրաժեշտ գումարը՝ իրականացնելու համար Հիմնարկի եւ հայութեան երազը՝ Երեւանի մէջ հիմնելու եւ գործի դնելու Ցողունային Բջիջներու Պատուաստումի Կեդրոնը:

Ինչպէս տարբեր ազգային փոքրամասնութիւններ, հայութիւնը եւս ունի իր ծինային իւրապատու կազմութիւնը՝ ինչ կը վերաբերի հակածիններու փոխ պատուաստումին, որ կը նշանակէ, շատ աւելի մեծ հաւանականութիւն՝ գտնելու ոսկրածուծի համապատասխանում հայութեան զաւակներուն մէջ: Նկատի ունենալով ոսկրածուծի նուիրատուներու սահմա-

հիմնուեցաւ ՀՈՆԱՀ-ը, սօքթ. Ֆրիտա ձորտունի նախաձեռնութեամբ:

օր վերջ գրեցի երկար նամակ մը: Նոյն վահրամն էր... միշտ լաւատես, հպարտ՝ ամենադժուար, ծանր օրերուն իսկ. ոչ ոքի կ'ուզէր իր ցաւերը պատմել եւ կեանքը դիմաւորեց միշտ ժպիտով, առանց զգացնելու իր ներքին տառապանքները:

«Տարիներով անխնայ գործածեց սիրտը»... որչափ անկեղծ: Եղած է «մանկութիւն չունեցող» սողոմէ, բայց զրկանքն ու տառապանքը չեն կրցած նուաճել զիրենք: Քալեց դէպի առաջ՝ աշխատանքով,



եմ հիմա...»: (1982 Յուլիս)

Գիշեր է: Անհանդարտ, ջղալին, աչքս ժամացոյցի վրայ կեդրոնացած, կը սպասեմ՝ երկու սլաքներու իրարու հանդիպելու վայրկեանին: Կէս գիշեր էր, հեռաձայնի ընկալուչը ձեռքս՝ քիչ մը տատամսելով, քիչ մըն ալ վախով, արագ-արագ թիւերը դարձուցի, ու շատ չանցած իզական ձայն մը պատասխանեց: Շուտընցաւ եւ աւելի կասկածով, նիշխակ չհարցուցի, թէ որո՞ւ հետ կը խօսէի... Վահրամին հետ խօսիլ կ'ուզէի, մտահոգ էի: Պահ մը մոռցայ նոյնիսկ, որ Իվոնը կրնար ըլլալ:

Վահրամն էր...: Լիզպոնը տակաւին նոր կ'արթնար իր խաղաղ բունէն: Ես ալ յանցաւոր զգացի, այդքան կանուխ գինք անհանգիստ ընելու համար, բայց այնքան ուրախացաւ, յուզուեցաւ, եւ սկսաւ համով կատակներով խօսիլ ու խօսիլ, հակառակ զգուշացումիս որ քիչ խօսի եւ չյոզնի: Տրամադրութիւնները բարձր էին, ձայնը յստակ, առողջ, լաւատես: Վախս փարատեցաւ, սկսած էինք կատակներ ընել, խնդրեցի, թելադրեցի, որ անպայման այս կողերը այցելէ առաջին պատեհ առիթով, օգտուելու այտուղի կարող սրտաբան մասնագէտներու կարողմանով: Վստահեցուց, թէ լաւ ձեռքերու մէջ է եւ մտահոգութիւն պատճառ չկայ: Յանդիմանեց՝ նամակս ուշացնելու համար: Երկու

հաւատքով եւ յարատեւութեամբ, ու հասաւ նախանձելի դիրքի մը: Յոգնեցաւ եւ չարչարուեցաւ:

Յիշողութիւնս զիս կը տանի Երուսաղէմ, անվերադարձ մեր մանկութեան դպրոցական «Երջանիկ» օրերուն, ուրկէ մեր բարեկամութիւնը կու գար հին այն օրերէն, երբ զեղադէմ խելացի մանչուկն էր Վահրամ, միշտ գուարթ, արթուն, կոկիկ եւ մաքուր: Փոքր խմբակ մըն էինք, նոյն հետաքրքրութիւնները ունեցող, իրարու մօտիկ բարեկամներ. դպրոցական եւ արտադպրոցական հաւաքոյթներուն միշտ միասին կ'ըլլայինք:

Հակառակ իր ունեցած վերիվայրումներուն եւ նիւթական դժուարութիւններուն՝ միշտ շէն, կատակախօս եւ մթնոլորտը խանդավառող էր: Կը սիրէր, մեզի՝ աղջիկներու հետ չարածճի կատակներ ընել եւ չարչարել մեզ, բայց ո'չ վիրաւորել: Բոլորիս ալ օգնելու պատրաստ, բոլորիս դժուարութիւններուն հասնող, մոռնալով յաճախ իրը: Խաղափայլ կամ ֆուլթպրի դաշտ՝ խորթ էր իրեն համար. գինք փնտրողը կը գտնէր մատենադարանի մէջ, կամ անկիւն մը՝ խօսակիցներով շրջապատուած:

Երուսաղէմի հմայքը ուրիշ է մեզի համար: Թէեւ մեր մանկութիւնը եւ պատանեկութիւնը հոն ապրեցանք եւ ձգեցինք այնտեղ, բայց այդ օրերը կը մնան միշտ

թարմ եւ կը դիմանան տարիներով: Անցեալի կապուած ըլլալու հպարտանքը ունենալէ աւելի, այդ անցեալին «ապրուած» ըլլան է, որ տարբեր է ուրիշ զգացումներէ: Անցեալ ունեցողները հետաքրքրական եղած են միշտ:

Վահրամ մէկ հատիկ զաւակն էր գէյթունցի ծնողքին: Հայրը՝ Տէր Յակոբ քահանայ, 1915-ի արհաւիրքէն կիսամեռ ազտած - Զէյթունի եւ Տէօրթֆոլի մէջ կուտած - հայրենասէր, փարթամ հասակով, խիզախ, կատակախօս կղերական մըն էր: Հազիւ 12-13 տարեկանին, Վահրամ կորսնցուց հայրը, ու այն օրէն եղաւ միակ սփոփանքը եւ նեցուկը իր բարի, հեզահամբոյր մօրը: Ոչ մէկ հարազատ ունէին: Զրկանքներով եւ նիւթական գոհողութիւններով, Անգլիական Գոլէճն ալ աւարտեց պատուով վկայականով:

Շահան Պէրէրեանի շնորհիւ Երուսաղէմի երաժշտական կեանքը



աշխուժացած էր. մենք փոքր էինք, չէինք մասնակցեր: Բայց մեր սէրը, ճաշակը արթնացած էր. երգել կ'ուզէինք՝ խումբ չկար: Օհան Տուրեանը հասաւ, աւարտած՝ խմբավարային եւ յօրինումի դասընթացքը. հաւաքուեցանք իր շուրջը: Վահրամը՝ իր բարեկամները, ես՝ ընկերուհիներս հաւաքելով, նախնական հան-

Մար.ք էջ 17

Armenian Sisters Academy of Los Angeles



OPEN HOUSE

Friday, March 7, 2008 6:30 p.m. – 9:00 p.m.

2361 Florencita Dr., Montrose, California 91020

Website ASAMontorse.com

Email ASACA@SBCGLOBAL.NET

Now accepting applications for Daycare through 6<sup>th</sup> grade For the 2008-2009 school year

Fully Accredited by WASC

- Our school strives to give our students the finest education, while providing an atmosphere of Christian love in an Armenian ethnic setting.
- Small class sizes are designed for students to receive the individualized attention they deserve.
- Computer classes offered to K-8<sup>th</sup> grades.
- Spanish classes offered to 2<sup>nd</sup>- 8<sup>th</sup> grades.
- Hot lunch prepared in school cafeteria.
- After school sports program.
- Day care for 2 -3 year olds.
- Dedicated and talented staff.
- Affordable tuition.
- After school child care.
- Large and spacious parking lot.

For more information please call (818)249-8783

ՅՈՒՇԵՐ

ԽՂՃԻ ՉԱՅՆԸ

Ռ. Կորիւն

Հայ տարեցների միութեան շէնքի մուտքին յաջորդող գրասենեակում միութեան գործերով էի գբադուած, դրան առջեւը նկատեցի պրն. Յարութիւնին գաւազանը ձեռքին դէպի սրահ առաջանալիս, յարգանքով ներս հրաւիրեցի: Ամէն անգամ դէպի սրահ գնալիս, որ կատարուում է գրասենեակի առջեւից, նա յաճախ կանգնում է դռան մէջտեղը ձախ ձեռքը նրա շրջանակին յենած, իսկ աջը գաւազանին սեղմած, մի տեսակ իր հաւասարակշռութիւնը պահպանելու համար, իսխառումը հաւասար է անկման՝ «Բարի՛ լոյս պրն. Ռուբէն, ասելով կամաց առաջանում է դէպի սրահ, սակայն այս անգամ այլ տեսակ ստացուեց, նա ներս մտաւ, հանգիստ տեղ գրատուեց աթոռին եւ գրոյցի բռնուեցինք: Երկար ժամանակ էր նա միութիւն չէր գալիս, հետաքրքրուած իր վիճակից ու առողջութիւնից հարց տուի:

«Պրն. Յարութիւն, բարի լոյս, բարի տեսանք, ո՞նց է ձեր առողջութիւնը, ո՞ւր է իր այս անցած ամիսների ընթացքում:

«Հիւանդ էի, սրտի տագնապ ունեցայ, թեթեւ գործողութեան ենթարկուեցի, բաթրի են դրել սրտիս, հիմա լաւ եմ գտում, գլխապտոյտս մօտաւորապէս անցել է կարողանում եմ քայլել:

«Անցած լինի, ուրախ եմ, քեզ առողջ եմ տեսնում, քեզ հոգ տար, որպէսզի այս ցրտերին չմըսես, շատ հիւանդութիւններ առաջանում են ցրտառութիւնից: Իրեն պատմում եմ իմ լսած կարճ պատմութիւնը Մխիթար Հերացու մասին:

«Մխիթար Հերացին 11-12-րդ դարի բժիշկ էր, նա իր բժշկական տաղանդով ու գրած գրքերի շնորհիւ «Նոչակուեց» բժշկապետ: Նա մի օր ձիւն ձմեռ ժամանակ գիշերով գնում է հիւանդին տեսութեան: Հիւանդի ջերմը բուսաստեղերով բուժելուց յետոյ տուն վերադարձի ճամբին մի հելուզակ նկատում է նրան, առաջը բռնում է, տեսնում է շատ ընտիր վերարկու կալ հագին, առանց իմանալու նրա ինքնութիւնը, ով լինելը, մտադրում է՝ ինչ գնով եղել է նրա վերարկուին տէր դառնալ, մօտենում է բժշկապետին հրամայելով:

«Տո՛ւր ինձ այդ վերարկուն, եթէ ոչ քեզ կը սպանեն:

«Հերացին այլալուծած պատահարից, սակայն չի կորցնում իրեն դառնալով երիտասարդին:

«Շատ լա՛ւ, քեզ կը տամ իմ վերարկուն, սակայն մի պայմանով՝ դու ինձ տուն հասցնելուց յետոյ վերարկուն կը յանձնեմ քեզ:

«Չ՛է, այդպէս անկարելի է, դու ուզում ես ինձ իսպիե՞լ, քանի որ տուն հասնելուն պէս հարայհրոցով ձայն կը բարձրացնես եւ ինձ ձեքակալել կը տաս, չէ՛, հանի՛ր վերարկուն, եթէ ոչ այս դաշոյնով քեզ կը սպանեմ:

«Պատուով եմ երդում՝ որեւէ օգնութեան չդիմեմ, հենց որ հասանք, վերարկուն կը յանձնեմ:

Հելուզակը համաձայնուում է, միասին ճամբայ են ընկնում դէպի տուն: Սառնամանիք պարզկայ գիշեր է, գետինը ծածկուած է ձիւնով, լիալուսնի լոյսով ճամբան յայտնի է: Նրանք ձիւնը կոխկտելով վռագ առաջ են գնում լուռ ու մունջ, Հերացին առջեւում, իսկ ետեւից

հելուզակը: Տուն հասնելուն պէս Հերացին հանում է վերարկուն եւ մեկնում է նրան առանց աղմուկադադակ առաջացնելով կամ խոստումը չկատարելու որեւէ փորձ թող չի տալիս: Հելուզակը առնում է վերարկուն, սակայն չի գնում, գարմացած հարց է տալիս:

«Ասէ՛ք, տեսնե՛մ, դուք ո՞վ էք, ինչո՞ւ ինձ բերիք մինչեւ այստեղ եւ առանց ինձ բռնանալու կամ մէկին կանչելու վերարկուն յանձնեցիք, այնպէս է երեւում, դուք սովորական մարդ չէք:

«Մխիթար Հերացին եմ, եթէ վերարկուն այնտեղ յանձնէի, այս սառնամանիքին պիտի մըսէի եւ հիւնդանալի, քանի որ շատ հիւանդութիւններ ցրտառութիւնից են առաջանում:

«Երիտասարդ՝ հելուզակը երբ լսում է պատուաւոր մարդ՝ Մխիթար Հերացու անունը ամօթից վերարկուն վեադարձնելով գլխալու թողնում եւ հեռանում է:

Պրն. Յարութիւնը խօսում է դանդաղ՝ հագիւ լսելի նուազ ձայնով, զգալի դարձնելով ֆիզիքական տկարութիւնը: Նա ութամասունը անց միջակ հասակով, լիքը կազմուած քով, դանդաղաշարժ ծերահասակի համակրելի արտաքինով մի անձնաւորութիւն է, կոկիկ հագնուում է, գլխին ճաղատը ծածկող ֆրանսական տեսակի գլխարկը, աչքերին ակնոցը, հանդարտ ու լուրջ քայլուածքով միութիւն է գալիս, հանդիպում է ընկերներին, սրահում մի քանի ժամ նարդի է խաղում իր մշտական խաղընկերների հետ, ապա ճիշտ տասներկուսին ցտեսութիւն ասելով դարձեալ գգուշաւոր քայլերով նոյն մտքերի մէջ սուզուած թողնում եւ հեռանում է գաւազանը որպէս յենակ ձեռքին՝ կէսօրին կողակիցի մօտ լինելու համար:

Նա միութեան անդամ է: Միութիւն յաճախողները հանգստի կոչուած հայ տարեցներ են՝ տղամարդիկ շատ աւելի քան կանայք, որոնք մայր հայրենիքից եւ տարբեր գաղթօջախներից արտագաղթած հայեր են, մեծամասնութիւնը իրանից, նրանցից շատերը իրենց կամեցողութեամբ չեն եկել, այլ՝ բերուել են գաւակների միջոցաւ, նաեւ որոշներին երեխաների կարօտն է քաշել դէպի այս ծովածաւալ երկիրը, դէպի այս խորթ, բայց հոգատար երկիրը:

Պաշտօնիս բերումով, որպէս միութեան գրասենեակի վարիչ, յաճախ միութիւնեկաներից որոշներին հետ մտերմիկ գրոյցի եմ նստում, նրանք իրենց անցեալ կեանքի կատարած աշխատանքներից, ծառայութիւններից, ընտանիքից եւ չմոռացուած յուշերից են պատմում, կարօտով են արտայայտուում իրենց լքած երկրի մասին:

«Ափսոս չէր մեր երկիրը, նրա ջրին, օդին, տաքին ու ցրտին, սարին ու ձորին, թփին ու ծառին, չորս եղանակներին ընտելացած էինք, կարեւորը այն որ լեզուն իմանում էինք, որտեղ ուզում էինք, մենակ ման էինք գալիս, ում տուն ցանկանում էինք՝ գնում էինք, քանի որ նրանք մեր շուրջն էին, մի թաղի մէջ էինք, այստեղ տարբեր է, այստեղ հարազատ չի, այստեղ սրտամօտիկ չի:

Պրն. Յարութիւնը յաջողակ գործավար է եղել, նախքան իրանի իսլամական լեղափոխութիւնը նա իր ձեռներէցութեան շնորհիւ կա-

րողանում է սեփական աշխատանք եւ բարեկեցիկ վիճակ ստեղծել իր ընտանիքի համար: Նկատելով որ երեխաներն արդէն իսկ գտնուում են Միացեալ Նահանգներում, ինք եւս կնոջ հետ իրանից արտագաղթում է երեխաների մօտ եւ վերջնականապէս հաստատուում ԱՄՆ-ում:

Պրն. Յարութիւնը դիմացահանգիստ ու խաղաղ նստած աչքերը դիմացի պատին յառած մտապատկերին ապաւինած պատմում է իր գործնառութեան ընթացքում պատահած մի անմոռանալի դէպքի մասին, այսպէս է սկսում:

«Ամռան եղանակ էր՝ Թեհրանի կէսօրեայ կիզիչ ժամանակը, երեք պարսիկ հայրենակիցներ, աւելի ճիշտ թրքախօսներ, բարձր բարձր խօսելով ներս են մտնում իմ ճաշարանը եւ տեղ են գրաւում սեղանի շուրջը: Ճաշարանս գտնուում էր Թեհրանի այսօրեայ էնդէլաբ անուանող կենտրոնական բանուկ պողոտաներից մէկի վրայ՝ Հասան Ֆերդոսի հրապարակին: Այս ճաշարանը բանում էր թագաւորի օրօք, մատակարարում էինք սանդուխներ, դոլմա, լեզու, ուղեղ եւ այլն առանց ալկոհոլիկ խմիչքի սեղանների վրայ, խմիչքը յաճախողներին վաճառուում էր ճաշարանին միացած իմ նպարատնից տուն տանելու համար: Իրանի իսլամական լեղափոխութեան հենց առաջին օրուանից արգելուեց ալկոհոլիկ խմիչքը եւ բոլոր քաղաքների այն տեղերը՝ խանութները եւ ճաշարանները, ուր խմիչք էին մատակարարում եւ կամ վաճառում՝ նրանց փեղկերը, ապակիները ջարդեցին, խմիչքները սրուակներով կտրտեցին, խմիչքի գործարանները փակեցին՝ դասքանները ջարդելով, նիւթական մեծ վնասներ պատճառելով թէ՛ տէրերին, թէ՛ երկրի անտեսութեան, այն համոզումով էր արւում այս գործը, իբր թէ իսլամական երկրում խմիչքի գործածութիւն չպիտի լինի, որն հակասում է իսլամ կրօնի կանոններին:

Երբ մարդ դիմացը փոս է տեսնում, շրջանցում է այն, որ չընկնի մէջը եւ մարմնական վնաս տեսնի: Մեր կեանքում ապականիչ երեւոյթներ անկասկած կան, սակայն գիտակցաբար խուսափում ենք նրանց հետեւանքը կործանիչ նկատելով:

Այստեղ ընդհատելով պրն. Յարութիւնին այդ ջարդ ու փշուր անելու դէպքերից մէկն եմ յիշում իմ ակնատեսիս վկայութեամբ:

Մեր տան մօտիկ փողոցի վրայ գտնուող ճաշարանի ապակիները ջարդուում էին տիրոջ ներկայութեամբ, ջարդողները երեք իսլամ երիտասարդներ էին մզկիթից գործուղուած, որոնք մահակներով նախ դռան ապակիները ջարդեցին, ապա՝ խմիչքների սրուակները, ամբոխ էր հաւաքուել եւ անտարբեր դիտում էր նրանց իբր թէ լեղափոխական այս արարքը: Նրանք գործը աւարտած լինելով դարձան դէպի հայ տիրոջ կոպտօրէն հրահանգելով:

«Նախ՛ր եւ տե՛ս, սրանից յետոյ չի թոյլատրուում որեւէ մի տեսակ ալկոհոլիկ խմիչք վաճառել եւ գործածել, թէ՛ վաճառողները եւ թէ՛ գործածողները պատժի են ենթարկուելու:

Անշուշտ խմիչքի արգելման հրահանգը պաշտօնական էր, որի խախտողները ենթարկուելու էին պատժի, սակայն ոչ պատժողական վերաբերմունք ցուցաբերուեց ոչ իսլամների նկատմամբ նրանց արտօնելով օգտագործումը տնտրում իրենց պատրաստութեամբ առանց մոսուլմաններին վաճառելու: Այս օրէնքը լեղափոխութիւնից ի վեր գործադրուում է, անտեսողները պատժուում են՝ բանդարկուելով, դրամական տուժի ենթարկուելով եւ հրապարակաւ մտրակահարուելով: Հայերի համար այս մենաշնորհ օրէնքը խմիչքի ազատ օգտագործելու օրէնքը մի շարք հայ ընտանիքներում առաջացրեցին բարդութիւններ:

Միջանկեալ խօսքս վերջացնելով դիմում եմ պրն. Յարութիւնին որպէսզի շարունակի:

«Ճաշարանում այնքան էլ յաճախողներ չկային ամառայն օթի պատճառով, անմիջապէս մատուցողը նրանց է մօտենում եւ պատուէր է ստանում, շատ չանցած սեղանը նախշուում է գոյնզգոյն պնակներով բաժակներով եւ տեսակ-տեսակ ուտելիքներով:

«Նրանք թէ ուտում էին եւ թէ բարձրաձայն գրուցում առանց նկատի առնելով թէ ուր են գտնուում,

Շարք էջ 16

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**  
**Enclosed a check for (one year)**  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax :-----

# ԽՂԾԻ ԶԱՅՆԸ

## Շարունակուած էջ 15-էն

կարծես վայրը մի տեսակ իրենց սեփականութիւնը համարելով եւ ներկաներին բոլորովին անտեսելով եւ կարեւորութիւն չտալով: Նրանք լաւ կուշտ ու կուռ կերան, ծխախոտ վառելով ոտքի կանգնեցին եւ ճանապարհ ընկան:

-Ես դրամարկղի մօտ նստած հետեւում եմ նրանց:

-Մատուցողը մօտեցաւ նրանց եւ հաշիւ պահանջեց:

-Ներողութիւն պարոններ, ձեր հաշիւը 65 թուական կը լինի, խնդրեմ, վճարէք այս գումարը, ապա մեկնէք:

-Ի՞նչ հաշիւ, մենք տալացիկ չենք եւ ոչ մի բան չենք վճարելու:

-Հիմա որ այդպէս է, խնդրեմ, գնացէք այն դիմացը տիրոջ մօտ եւ իրեն ասէք, որ չէք վճարում:

-Նրանք առանց ամաչելու անտարբեր քայլերով առաջացան եւ ներկայացան ինձ:

-Դուք էք այս ճաշարանի տէրը:

-Այո՛, ես եմ:

-Մուսիօ՛, ինչպէս տեսնում ես, այս երեք յաղթանակներս քո ճաշարանում հաց ենք կերել, լաւ էլ ախորժակով ենք կերել եւ կշտացել, հիմա էլ թողնում ենք ճաշարանդ առանց դրամը վճարելու:

-Ինչո՞ւ, միթէ՞ ձեզ լաւ չծառայեցին, կամ ձեր կերած-խմածը լաւ չէր, որ չէք վճարում:

-Ամէն ինչը լաւ էր, սիրտներս ուզում է, որ չվճարենք:

-Շատ լաւ, բայց մի բան նկատի առէք, դուք չէք ուտի, ձեր կերածը հալալ չի լինի, եթէ Աստուած կայ վերեւում, թող նա մի բան անի, գնացէք, փող չեմ ուզում:

-Հայի հացը մեզ համար շատ էլ հալալ է, շատ էլ խօսես:

-Նրանք կարծես մի ընդհարումից յաղթական խանութից դուրս նետուեցին խանութից անց ու դարձ անողների մէջ, ես ապշել եւ քար էի կտրել, առաջին անգամն էր, որ այսպիսի դէպքի դէմ-յանդիման էի գտնուում, անշուշտ պատահել էր, որ դրամ չէին ունենում, սակայն խնդրելով ներում էի իրենց, բայց այս մէկն ինձ շուարեցրեց, չիմացայ ինչ տեսակ դիմադրութիւն ցոյց տամ, այդպէս հանգիստ նրանց թողեցի գնան: Ես ինձ նուաստացած էի զգում պարսիկ գործաւորներու մօտ, որ նրանց հախից դուրս չեկայ, վախենալով կուռից ու հետեւանքից, սակայն սխալ թոյլ տուեցի, որեւէ գնով նրանցից պիտի պահանջէի իմ իրաւունքս, նոյնիսկ ոստիկանութիւն կանչելով, ամենայնուայս չպիտի թոյլ տայի, որ գնան, սա պիտի վերագրել իմ թուլութեան եւ վախկոտութեան, իրաւունքը ինչ գնով եղել է՝ պէտք է առնել, քաղաքավարութեամբ չեղաւ, ուժով պէտք է առնել:

-Այս պատմութիւնը ժամանակի թաւալման հետ մոռացուելու վրայ էր, երբ խանութում դրամարկղի մօտ նստած հաշիւներ էի անում, տեսայ մի մարդ դժգոյն ու հիւժուած խառնաշփոթ վիճակում մօտեցաւ ինձ ասելով:

-Մուսիօ՛, եկել եմ իմ պարտքս վճարել:

-Ներողութիւն ինչ պարտք, դու ո՞ւր ես:

-Ես այն երեք մարդկանցից մէկն եմ, որ չորս-հինգ ամիս առաջ եկանք այստեղ, կերանք, կշտա-

ցանք եւ առանց վճարելու հաշիւը քեզ ծաղրելով ու սպառնալով թողինք ու հեռացանք:

-Լաւ խորացայ մարդու դէմքին, տեսայ ճիշտ է ասում, նրանցից մէկն է:

-Ինչ պատահեց, որ եկաք ձեր պարտքը վճարելու:

-Մուսիօ՛, էն օրը դու մարգարէացար, երանի լսէինք քեզ եւ դրամը վճարէինք, գոռոզ եւ մոլեռանդ մադիկ են յաճախ փորձանքի ենթարկուում, ճիշտ ասացիր, որ այդ հացը հալալ չի լինի, իրօք էլ այդպէս եղաւ, մեծ փորձանք պատահեց մեզ մահուան գնով:

-Պատմիր, տեսնե՞ք, ինչ եղաւ, ինչ կատարուեց ձեզ հետ:

-Այդ օրը մենք մեր սեփական ինքնաշարժով գնում էինք Նէյշա-փուռ, մեքենան մեր մեծ ընկեր Հասանն էր քշում, շատ ուրախ էինք, որ հայի հացը կերել ենք առանց փող վճարելու եւ մեր անեկդոտներով հայերին ծաղրում, նրանց վրայ ծիծաղում եւ այսպէս գոլարճանում էինք: Մեքենան Հարազի ճամբից սուրում էր դէպի առաջ, ուշ գիշեր էր, ճամբան գնում էր բարձրաբերձ սարերի միջից, ամէն տեղ խաւարն էր տիրապետում, խցիկի ապակիները դուրս բան չէր երեւում, միայն ճամբան լուսաւորում էր ինքնաշարժերի լոյսով, դեռ կտրելիք ճամբայ շատ ունէինք, անցել էինք Գորգանը, ես մեքենայի խցիկի ետեւի աթոռին էի նստած, երեւում էր մեր մեքենայի Հասանը յոգնած է եւ աչքերը մերթ ընդ մերթ փակուում են, զգուշացրի իրեն, որ գնանք մի տեղում հանգստանանք, այդ մտքին էինք, մէկ էլ նկատեցի Հասանը մեր առջեւի ծանրաբարձից, որը շատ դանդաղ էր գնում, ծանր բեռի տակ կքած, վազ անց կատարեց, միայն երկու մեքենաների բախումի ուժգին ձայնը լսեցի, էլ չիմացայ, ինչ պատահեց, մէկ էլ աչքերս բացեմ, տեսնեմ, հիւանդանոցումն եմ ոտքս եւ թեւս գաչի մէջ, հարց ու փորձ արեցի ընկերներիս մասին, ցաւօք տեղեկացրին, թէ նրանց հիւանդանոց տեղափոխելու ճամբին մահացել են:

-Ես ամէն ինչ թողած ուշ ի ուշոյ լսում էի նրան, իմանալով ընկերների մահուան մասին տիրեցի ասելով:

-Շատ եմ ցաւում այդ դէպքի համար, թող Աստուած իրենց մեղքերը ների:

-Այդ վթարից յետոյ գիշերները հանգիստ քուն չունեմ, անընդհատ սարսափելի երազների մէջ տանջուում ու տառապում եմ, մեքենայի արկածից իմ մահացած ընկերներս են աչքիս առջեւը գալիս, քեզ չվճարած փողի համար դատարան են տանում, ծեծում են, թուք ու մուր են անում, այսպիսի քառասյին գիշերներ եմ անցկացնում, այս բժշկի մօտ, այն բժշկի մօտ, քնաբեր դեղերով ինձ տուն են ճամբում: Մուսիօ՛, տես, ինչ եմ նիհարել եւ տկարացել: Բժիշկներից խէր չտեսայ, կեանքը ինձ համար դարձել է ուղղակի դժոխք, մի քանի գիշեր առաջ երազումս երեւաց մի սպիտակահեր ծերունի խորհուրդն ինձ տալով պատուիրեց:

-Ես լաւապէս իմանում եմ քո հիւանդութեան եւ տանջուելուդ պատճառը, դու շատ մեծ մեղք ես գործել, այն հային անտեղի վիրաւորել, անօրինաբար ձրիակերութիւն ես արել, սպառնացել եւ զօռ ես ասել առանց իմանալու որ քեզանից աւելի հօգորը կայ այս աշխարհում քեզ պատժելու համար, պարսկերէն ասած՝ դաստէ բալա դաստ բախար ասթ (քեզանից շատ աւելի ուժեղն էլ կայ), եթէ ուզում ես ազատուել այդ ցաւից, հոգեկան տուալտանքից, կը գնաս այդ Աստուծո արարած՝ հայի մօտ, ներողութիւն կը խնդրես, ձեռքը կը համբուրես, պարտքդ կը տաս, միայն այս դէպքում խիղճդ կը հանգստանայ, դու կը փրկուես այս վիճակից: Վերկա՛ց, գնա՛ նրա մօտ, եթէ ուզում ես ազատուել այս տարտարոսից:

-Ահաւասիկ մուսիօ եկել եմ իմ պարտքս վճարեմ, ահա՛, այն գուճարը, աղաչում եմ, ներէ՛ք ինձ եւ նաեւ իմ հանգուցեալ ընկերներին, որպէսզի նրանց հոգին եւս խաղաղուի, արդարեւ մեր արածը հետեւանք էր սխալ նախապաշարուածութեան հայերի նկատմամբ:

-Շատ ուրախ եմ, որ անդրադարձել ես քո սխալին, այն տհաճ վերաբերմունքին, որ ունեցաք իմ հանդէպ, ես ով եմ, որ ներեմ քեզ, թող Աստուած ների:

-Շնորհակալ եմ մուսիօ՛, հիմա զգում եմ խիղճս այդ ծանր բեռից թեթեւացած, մնաք բարով:

-Երթաս բարով:

Այս դէպքը ինձ պահեց մտորումների մէջ, չիշեցի մեր հայերի ջարդն ու կոտորածը 1915-1923 թուականներին թուրքերի միջոցաւ եւ հարց տուի ինձ՝ արդեօ՞ք այդ անմեղ հայերին կոտորողներն ու սպանողները յետոյ հոգեկան ինչ վիճակ են ստացել, արդեօ՞ք չեն տանջուել ու տառապել իրենց կատարած ահասարսուռ արարքի համար, վստահօրէն եղել են ազնիւ եւ մարդասէր մարդիկ, որոնք մեղացի եւ զղջանքի գրքեր են գրել, սակայն իրարու յաջորդող թուրք մոլեռանդ պետութիւնները խատիւ առաջը բռնել են եւ նրանց զղջանքի եւ մեղացի գալու հոգեբանութեան տարածման դէմ են կանգնել իրենց հակահայ քարոզչութիւններով եւ նրանց լուրջել են:

Ես համոզուած եմ, որ արդարութիւնը անկասկած կը յաղթի, փաստը մեր դատի համար հետեւողական աշխատանքը եւ պայքարը, որը ի շահ մեզ արդիւնաւորում է թիւրքերի մէջ խղճի ձայնի արթնացման հետեւանքով, որը հետզհետէ աւելի թափ կը ստանայ եւ կը տարածուի:

Հրանդ Տինքի արդարութեան համար մղող ձայնը փամփուշտի լեզուով լուցնող եւ աշխատանքը կասեցնող թուրք մոլեռանդները անգիտակցաբար մեծ ծառայութիւն կատարեցին ցեղասպանութեան ճանաչման ճամբին տարող աշխատանքների տարածման:

Հրանդ Տինքի նահատակութիւնը հիւլէական ուժերից աւելի ուժգին աշխարհը ցնցեց բացառապէս տեղով թուրք շոփինիստ պետութեան փանթուրքիզմի քաղաքականութեան յետամուտ էութիւնը: Հրանդ Տինքի զոհաբերութիւնը լրատուական յորդ հեղեղ տեղացրեց աշխարհի տարբեր ծագերում ի նպաստ հայ ժողովրդի պահանջների արդարացիութեան:



**AAA Ladies Auxiliary**  
Presents

# A Night of Comedy

Featuring  
**HAROUT SOGHOMONIAN**

Saturday, March 1, 2008, at 8:30 p.m.  
H.M.M. Garo Soghanalian Hall  
1060 N. Allen Ave., Pasadena

Donation: \$35



# «ՄԱՅ ՄԻՇՏ ԱՆԿԵՐԾ ԼՈՅՆ ՎԱՐԱՄԸ»

Շարունակում էք 14-ին

դիպում-փորձերը սկսանք մեր տան մէջ: Խնամախոսութիւն, հետաքրքրութիւն շատցաւ, ու յաջողեցանք կազմակերպուել, շնորհիւ մեր ծնողներուն օժանդակութեան ու փորձառութեան: Շահան Պէրպէրեան եղաւ խթանը, Տուրեանին օգնելով, կոմիտասեան երգերը մեկնաբանելու: Եղանք հաւատարիմ երգողներ հիւր երգահաններու՝ Ա. Պատմագրեանի եւ Հ. Պէրպէրեանի համերգներուն, հաճոյքը եւ ընկերական վայելքները միախառնելով:

Իր նամակներէն մէկուն մէջ, Վահրամ կը գրէր. «Նամակդ անգամ մը եւս անդադաւնալ տուաւ, թէ որքան տարբեր էր Երուսաղէմի մեր սերունդը: Աւելի բարձր գաղութներ չկրցան հոգիներուն վրայ դնել «ագնուականութեան» այն դրոշմը, որ Երուսաղէմի մեր սերունդինը եղաւ: Արիկա արդիւնքն էր այն յատկաժամանակին եւ մթնոլորտին, որուն մէջ ապրեցանք, մեր հոգիները բացինք, շունչին՝ տեսիլք ունեցող այն քանի մը մարդոց – Գուշակեան, Օշական, Շահան Պէրպէրեան – որոնք այդ շրջանը լեցուցին իրենց բարոյական եւ իմացական ներկայութեամբ»:

Այդ մթնոլորտը, միջավայրը մեզ յղկեց, կոփեց, ազնուացուց, բայց աւանդ, Պաղեստինի ներքին կացութեան զոհ գացինք, երբեմնի մեր մտերմիկ գաղութը քանդուեցաւ: Քամին Վահրամը տարած էր Կիպրոս, մեզ ալ Յորդանան, Լիբանան:

Չորս տարիներ վերջ դարձեալ հանդիպեցնք իրարու Կիպրոս, տարբեր պայմաններու տակ: Մեր պատանեկան բարեկամութիւնը աճեցաւ, ուռճացաւ ու մտերմացաւ աւելի քան 30 տարիներու ընթացքին, նախ Կիպրոս, ապա ինք՝ Լիպոն եւ մենք՝ Ամերիկա, նամակագրութեամբ եւ մի քանի անգամ այցելութիւններով:

Բարի, անմեղ, արթուն, պզտիկ բաներով ուրախանալ գիտցող վանքի համեստ տղան, չղաւաճանեց իր անցեալին, արմատներուն, որոնցմով հպարտ ալ եղաւ ամէն տեղ: Ուրիշներու նման դրամը, դիրքը բնաւ չչլնեցուց, եւ չչփոխեց զինք: Մնաց միշտ անկեղծ նոյն Վահրամը զինք լաւ ճանչցողներուն:

Իր մեծագոյն հաճոյքներէն մէկն էր խօսակցութիւնը, եթէ յարմար խօսակից մը գտնէր մանաւանդ, մէկը՝ որ քիչ մը հետաքրքրութիւն ունենար գրականութեան, արուեստին եւ հայկականութեան հանդէպ: Երգի սիրահար էր, կը սիրէր երգել, եւ որչափ զգայուն ու խորունկ կ'երգէր մանաւանդ Սայեթ-Նովայի երգերը երբեք չէին հրապուրած զիս, յաճախ կը վիճէինք ու գիրար կը հակասէինք: Սակայն ես պարտուեցայ. իր ազդեցիկ եւ համով բացատրութիւնները ինչպէս նաեւ իր քաղցր ձայնով մեկնաբանութիւնները անձնատուր ըրին զիս, ենթարկուեցայ իրեն: Այժմ ես ալ սիրահար մըն եմ Սայեթ-Նովայի: Ան բացաւ միքս, աչքս:

Կիպրոսի մեր 5-6 տարիները իսկապէս եղան հոգեկան բերկրանքներով բեղուն եւ հետաքրքրական: Մի քանի սաղիմահայ գաղափարակից բարեկամներով շրջանակ մը կազմած էինք, եւ յաճախ միասին պտոյտներ կ'ընէինք, կը հաւաքուէինք, մինչեւ ուշ ժամեր կը խօսակցէինք, կը կատակէինք. մեր հանդիպումները յաճախ կը վերածուէին պրական-երաժշտական երեկոյի: Վահրամ պէտք էր կարգար Զարիֆեան, Մեծարենց, Թէքէեան, որմէ

վերջ ես վերացած կ'երգէի Շահան Պէրպէրեանի, Կոմիտասի, Ալեմշահի լիրիքական երգերը, ապա ինք նոր շունչ առած կը սկսէր իր թախծոտ «Սեւ աչերէն»... ու վարարուն Սայեթ-Նովայի շարքը: Տարիներով միասին համադրած եւ վարած ենք Հայ Ռատիոժամի ձայնապիտուամները, ինչնամուտ եւ որակաւոր գրական-երաժշտական ծրագիրներով:

Վահրամը սիրտ ունեցող եւ նուիրուած ուսուցիչ եղաւ: Մեղքներեանի աշակերտութեան հոգին էր, սիրուած՝ բոլորէն: Իսկ կեանքը միշտ չէր որ բարեացակամ եղաւ իրեն հանդէպ: Միայն իրեն շատ մօտիկ եղողները գիտեն, թէ ինչ տխուր օրեր անցուց Կիպրոսի մէջ:

1954ի գարնան էր, նկատեցինք տկարանալը, նիւթարանալը, նիւթական նեղ վիճակը, հոգեկան անկումը: Վահրամը նոյն խօսուն, շինչող տղան չէր, փոխուած էր: Լուրջ հիւանդ էր: Երբեմն դարձողէն վերջ կ'այցելէ իրեն օգտակար ըլլալու մտադրութեամբ: Սենեակին մէջ առանձին, երկնցած կ'ըլլար հանգստանալու, օրուան սպառիչ աշխատանքէն վերջ: Չհասկցան վիճակը, նոյնիսկ բժշկապետը ըսած էր՝ «Մննդարար կերակուրներ պէտք է ուտես», եւ կատակելով կը լրացնէր. «Հարուստի հիւանդութիւն է եղեր, նայինք որքան կը դիմանանք»: Իր վերջին դահեկանը կը ծախսէր սնունդին:

Վկայականաց բաշխման օրը, փարթամ եւ ներկայանալի այդ Վահրամը ամենէն ետեւի շարքը նստած, նիւթար, տփոզն, խեղճուկ «վարժապետ» մը, կորսուած էր միւսներուն քով: Առջեւը գրաւած էին նորերուկ «տիտղոսաւոր» ուսուցիչները: Զարմանքով երբ հարցուցինք,

- Ինչո՞ւ ետեւը կորսուած էիր:
- Ես Ամերիկեան Համալսարանէն տիտղոս չունիմ..., - պատասխանեց դառնացած:

Այդ գիշեր մնաց անքուն, ցաւերու մէջ: Առտու կանուխ, 50-70 աշակերտներ Պէյրութ պիտի հասցնէր: Շաբաթ մը վերջ լուռ առինք, որ բաւական լուրջ վիճակի մէջ, դժկամակութեամբ, զինք տարած են Ազունիէի բուժարանը: Բոլորս շքեցանք, չուզեցինք հաւատալ:

Կեանքի եւ շողորթ մարդկութեան դէմ ընդվզում մը ունեցաւ: Կը կարծէր, թէ բոլորը պիտի դաւաճանեն, լքեն եւ մոռնան զինք: Շուտով, իր մօտիկ բարեկամները հասանք իրեն՝ նիւթական օժանդակութեամբ եւ լաւատես ու գուարթ նամակներով, ցաւը ամոքել աշխատեցանք:

Օր մը կը գրէր. «Ես ալ Պետրոս Դուրեանի, Մեծարենցի նման... եղայ. կը նմանիմ ովկիանոսի մէջտեղը կորսուած նաւապետին, որ ափը հասնելու յոյսը չունի եւ կը սպասէ նաւուն ընկղմելուն»: Յուզուեցանք՝ իր յոռետես նամակէն: Ամիսներ վերջ այցելեցինք բուժարան. երկչոտ, ան մօտեցաւ մեզի. շուտով մոռցնել տուինք վիճակը: Ուրախացաւ, խնդրեց որ դարձեալ այցելենք: Խոստումս յարգեցի եւ իր սիրած երգերու փունջով մը ելոյթ ունեցայ, ուրախացնելով հոգեպէս ընկճուած այդ հիւանդները եւ հազիւ զսպելով արցունքներս: Վերադարձնալ վերջ կը գրէր. «Այնչափ սիրովանք եւ հաճոյք տուիր բոլորիս: Հայկական յայտագիրներդ բոլորն ալ անհամբեր կը սպասեն, մեծ հետաքրքրութեամբ կ'ունկնդրեն: Բոլորն ալ կը սպասեն մօտալուտ այցելութեանդ՝ երբ անգամ մը եւս կը յուսան քեզ մօտիկ ընել եւ ինչո՞ւ չէ, տեսնել մանաւանդ»:

Ուղեկորոյց նաւապետը համբերութեամբ, առանց խեղդուելու հասաւ ափը, առիւծ կտրած: Ուսումը կրցաւ շարունակել եւ վերադարձաւ յաղթական, «տիտղոս»ը վիզէն կախուած: Այս անգամ աւելի յարգանքով սկսան վարուել հետը կարգ մը մարդիկ:

Տարիներու յուսալքուած, մոռալ օրերէ վերջ չուշացաւ նոր արշալոյսը բացուելի դիմացը: Կիւլպենկեան Հիմնարկութեան վարիչներէն մէկը եղաւ: Հասաւ բոլոր ուսումնաստենչ հայ տղոց, դպրոցներուն, պատեցաւ աշխարհ, ճանչցաւ Սփիւռքը իր ցաւերով եւ յոյսերով: Կեանքի փորձառութիւնը իրեն սորվեցուց մարդիկը ճանչնալու գաղտնիքը: Բացաւ սիրտը անկեղծ բարեկամներուն, ծուղակը չիւնկաւ պատեհապաշտ կեղծ «բարեկամ»ներուն:

Վահրամին ջերմ, մտերմիկ հիւրասիրութիւնը մենք ալ վայելեցինք երեք օրեր, Լիպոնի մէջ: Ուրախացուցինք զինք, որ առանձնութենէ կը տառապէր: Մինչեւ առտուան փոքր ժամերը խօսեցանք, երգեցինք, հին յուշեր պատմեցինք: Ան կարգաց իր Երուսաղէմի յուշերը, մեր շրջանի տիպարները, Նշան Աղբարը, Քինթոսը, Ախրազը, Ֆրստըիսի Յակոբը... «Պէտք է փրկել այս բոլորը, կեանքը՝ որ մերը եղաւ, ուր հասակ նետեցինք եւ կազմուեցանք» ըսաւ: Այս բոլորին մասին՝ պիտի ըլլար իր հինգերորդ գիրքը:

«Միացեալ Նահանգներու լիազօր ներկայացուցիչը», կը ծանօթացնէր զիս, միշտ կատակելով, որովհետեւ սիրով, իր երեք հատորները – իւրաքանչիւրէն հարիւրէ աւելի օրինակներ – սպառելու հաճոյքը ստանձնած էի: Գոհ էր եւ ուրախ, Ամերիկայի մէջ ալ ճանաչում գտած ըլլալուն:

1972-ին եւ 1980-ին այցելեց այս կողմերը: Խուսափեցաւ հանրային մեծ հրաւերներէն: Վերադարձաւ հոգեպէս լեցուած, մանաւանդ երբ հանդիպեցաւ՝ մանկութեան, պատանեկութեան բարեկամներուն: Ամէն բանի մէջ գեղեցիկը,

ագնիւր տեսնելու ճաշակը ունէր: Նկարիչ չէր, բայց նկարիչի չափ կը հասկնար: Երգիչ չէր, բայց չափազանց զգայուն էր եւ շատ արդար ու տեղին էին իր քննադատութիւնն ու գնահատականը: Ան կը յիշէր պարագան նշանաւոր հայ երգչուհիի մը, որուն հիացող մըն էր ինք, բայց չէր վարանած դժգոհանքը յայտնելու անոր հայերէն երգերու մեկնաբանութեանց համար:

Օր մը կը գրէր. «Ամէն անգամ որ պատեհութիւնը կ'ունենամ մենակատարողներ մօտիկ ընելու, անխուսափելի կերպով, ես ինծի բաղդատութիւն մը կ'ընեմ երգողին եւ քու միջեւ, անհուն կարելիութիւններով հարուստ այն խոստումին որ դուն էիր, ձայնդ էր, ու կը գտնեմ քեզ աւելի գերադաս»: Ապա միւլթարելով կը շարունակէր. «Հոգ չէ, մի տխրիր, երկու լուրջ, սիրուն, պատուական հայ զաւակներ մեծցուցած ես, լաւագոյնս վարձատրուած կրնաս նկատել ինքզինքդ. ես ան ալ չունեցայ, ու կեանքս թաւալեցաւ առանձին, անհրապոյր ու անիմաստ»:

Առանձնութիւնը իր կեանքի անբաժան ընկերը եղաւ, յոգնեցաւ, տառապեցաւ եւ ձանձրացաւ «աքսորեալ» վիճակէն:

1977ի Յունուարին ուրախացանք, երբ կարդացինք իր անակնկալ որոշումը: Իր արձակուրդին վերջին օրը, Փարիզէն կը գրէր. «Սերովբէ Սրբազանին առջեւ գլուխս դրի Մաշտոցին տակ եւ վերջ տուի պէքերութեանս: Ոչ ոք ներկայ եղաւ Ս. Պատկի խորհուրդին: Հիմա ուրեմն մաս կը կազմեմ ձեր շարքերուն»:

Հրաշալի, հասկցող առջիկ մըն էր Իվոնը. ան կրցաւ երջանկացնել եւ փոխէր իր մուսլ կեանքը: Բայց ափսոս, շատ կարճ եղաւ...:

Ախ այս սիրտերը, այնքան շուտ կը դաւաճանեն...:

Անգութ էր մահը. կը գարնէր այնտեղ՝ ուր պէտք չէ...:

Զօրաւոր անհատականութիւն ունեցող, վայելքը սիրող, կեանքին փիլիսոփայօրէն նայող, զգայուն արուեստագէտի տիպարն էր Վահրամ:

**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**  
**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Join Our New Music School in Pasadena  
 By Experienced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels

Professional Digital Recording studio for all your audio recording needs

1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104  
 Phones: (626) 797-8867 & (818) 599-1606  
 and  
 334 N. Central Avenue Unit 202  
 Glendale, CA 91203  
 Phones: (818) 244-8244 & (818) 599-1606  
 Visit us at: [www.musiclessons4u.com](http://www.musiclessons4u.com)

# ՄԱՐՁԱԿԱՆ

## ՇԱԽՄԱՏ

### ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ 4-ՐԴ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆՈՒՄ

«Մորելիա - Լինարես-2008» շախմատային սուպերմրցաշարի առաջին շրջանի վերջին տուրում Լեւոն Արոնեանը կրեց իր 2-րդ պարտությունը: Հայ գրոսմայստերը սեւերով գիշեց նորվեգացի Մադսոս Կաուլսենին: Արոնեանը եւս մէկ անգամ պարտություն էր կրել՝ մեկնարկային տուրում գիշերով Վեսելին Տոպալովին:



Ալեքսէյ Շիրովը սպիտակներով առաւելութեան հասաւ Ատրպէյճանի ներկայացուցիչ Թեմուր Ռաբաբովի նկատմամբ, իսկ Տոպալովը սեւերով յաղթեց Պետեր Լեկոյին: Ոչ-ոքի աւարտուեց նաեւ միայն Անանդ եւ Իվանչուկ պարտիայում:

Առաջին շրջանից չետոյ մրցաշարային աղիւսակը 4.5 միաւորով գլխաւորում է Վիշվանաթան Անանդը, որին 4-ական միաւորով յաջորդում են Տոպալովը եւ Շիրովը: Արոնեանը եւ Կաուլսենը 3.5-ական միաւորով բաժանում են 4-րդ հորիզոնականը:

## ՃՈՒՏՕ

### ԴԱԻԹԵԱՆՆ ՈՒ ՆԱԶԱՐԵԱՆԸ ԵՐՐՈՐԴ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Համբուրգում անցկացուած ճուտոյի Եւրոպայի Սուպերգաւաթի խաղարկութիւնում յաջող հանդէս եկան հայ ճիւտոյիստներ Յովհաննէս Դաւթեանն (60 կգ) ու Արմէն Նազարեանը (66 կգ)՝ զբաղեցնելով մրցանակային 3-րդ տեղը:



Առաջին գոտեմարտում Դաւթեանը բացարձակ առաւելութեան հասաւ բրազիլացի Ալեքսանդրէ Լէէի նկատմամբ (16-0), այնուհետեւ պայքարից դուրս մղեց դազախաստանցի Բազարբեկ Դոնբաեւին ու ֆրանսիացի Ջերոմէ Գիլյոտին: Քառորդ եզրափակիչ գոտեմարտում էլ ռուսաստանցի Եւգենի Ստանեւի նկատմամբ հայ ճուտոյիստի առաւելութիւնը նկատելի էր: Յաւօք, եզրափակիչի ճանապարհը նրա դիմաց փակեց ճապոնացի Տադահիրո Նոմուրան, որն ի վերջոյ զբաղեցրեց 2-րդ տեղը՝ վճռորոշ գոտեմարտում գիշերով աւստրիացի Լիւդվիգ Պաչներին: Իսկ Յովհաննէս Դաւթեանը բրոնզէ մետալի համար մրցավէճում յաղթեց թուրք Քեմալ Օզուզին ու դարձաւ երրորդ մրցանակակիր:

Քաշային այս կարգում Հայաստանը ներկայացնող միւս ճուտոյիստը՝ Արթուր Սրափեանը առաջին գոտեմարտում պարտուեց ապագայ ախտյանին՝ Լիւդվիգ Պաչներին, այնուհետեւ գիշեց շուէյցարացի Լիւդուիլի Չամարտինին ու դուրս մնաց պայքարից:

Արմէն Նազարեանը մինչեւ 66 կգ քաշային կարգում յաղթարշաւը սկսեց աւստրիացի Իվօ դոս Սանթոսի նկատմամբ տարած յաղթանակով, այնուհետեւ առաւելութեան հասաւ գերմանացի Ռենէ Շնայդերի, լեհ Պավել Չազորոնիկի նկատմամբ: Քառորդ եզրափակիչում հայ ճուտոյիստը գիշեց ռումինացի Գէորգէ Ֆասիեին: Բրոնզէ մետալի համար մրցավէճում Նազարեանն իրեն լաւ դրաներեց: Յաջորդաբար յաղթելով Լի Վանգին, Դաւիթ Դուբալովին ու Ադրիան Կուլիշին, Նազարեանն արժանացաւ բրոնզէ պարգեւի: Իսկ յաղթող ճանաչուեց սպանացի Օսկար Պենասը, որը եզրափակիչում առաւելութեան հասաւ հունգարացի Միկլոշ Ունգվարիի նկատմամբ:

Քաշային այս կարգում հանդէս եկած Համբարձում Տոնոյեանը, ինչպէս նաեւ Ռոբերտ Վարդանեանը (73 կգ) պայքարից դուրս մնացին նախնական փուլերում:

## ԹԵՆԻՍ

### ԴԱԻԹ ՆԱԲԱՆԴԵԱՆԸ՝ ԿՐԿԻՆ ՈՒԺԵՂԱԳՈՅՆՆԵՐԻ ՏԱՍՆԵԱԿՈՒՄ

«Ռոյթերզ» լրատուական գործակալութեան փոխանցմամբ, արգենտինացի թենիսիստ Դաւիթ Նալբանդեանը Պուէնոս Այրեսում տեղի ունեցած մրցաշարի եզրափակիչում երեք սեթերում 3:6, 7:6, 6:4 հաշուով պարտութեան է մատնել իր հայրենակից Խոսե Ակասուսոյին եւ կրկին յայտնուել է պրոֆեսիոնալ թենիսի վարկանիշային ցանկի առաջին տասնեակում՝ գրաւելով 8-րդ տեղը:



Նալբանդեանի ամենաբարձր ցուցանիշը գրանցուել է 2006 թուականին, երբ նա վերստին Պուէնոս Այրեսում տարած յաղթանակի շնորհիւ ցանկում գրաւել է 3-րդ տեղը:

«Ռոյթերզ»-ը նշում է, որ այսօր Պուէնոս Այրեսում Նալբանդեանն ապահովել է իր առաջին յաղթանակը 2008 թուականի ընթացքում: Ընդհանուր հաշուով, սա Նալբանդեանի 8-րդ մրցաշարային յաղթանակն է:

Արգենտինացի դրօշի ներքոյ հանդէս եկող ծագումով հայ թենիսիստ Դաւիթ Նալբանդեանը 2002 թուականին հասել է աշխարհի ամենահեղինակաւոր՝ Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակիչ:

Անցեալ տարի նա վարկանիշային ցանկում յայտնուել էր 26-րդ տեղում, քանի որ ստացած վնասուածքների հետեւանքով պարտութիւններ էր կրել եւ բաց էր թողել որոշ մրցաշարեր, սակայն յետագայում տարած մի շարք դժուարին յաղթանակների շնորհիւ տարելերջին մօտեցել էր ուժեղագոյն տասնեակին:

## ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ժագ եւ Արմինէ Գալանճեանի աղջիկ զաւակով մը բախտաւորուելու ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան իրենց շնորհաւորութիւնները կը յայտնեն նորածինի ծննդին, ընտանեկան համայն պարագաներուն եւ մասնաւորաբար նորածինի մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն:

Այս ուրախ առիթով փոխան ծաղկեկողովի \$100 տուար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

\*\*\*\*\*

Ժագ եւ Արմինէ Գալանճեանի աղջիկ զաւակով մը բախտաւորուելու ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան իրենց շնորհաւորութիւնները կը յայտնեն նորածինի ծննդին, ընտանեկան համայն պարագաներուն եւ մասնաւորաբար նորածինի մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն:

Այս ուրախ առիթով փոխան ծաղկեկողովի \$100 տուար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

## ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն  
ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ  
Արթին Սաղրեանի  
Փասատիմայի մէջ

Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն  
մինչեւ կ.ե. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104

Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.

- Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերննշում, շափարախտ, ազմա, եւայլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալիոյ, թմրադեղեր, եւայլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ - ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:
- Ուսումնական եւ սրտթային բարելաւում

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ քնարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ: (818) 246-0125

## ԳՐԱԴՈՒԱԾ ԹՈՒԿԱԿԱՆՆԵՐ

Մարտ 23	Չատկուայ Տօնակատարութիւն
Ապրիլ 5	Spanish Night
Ապրիլ 26	Las Vegas Trip
Մայիս 11	Մայրերու Օրուայ Ախաճաջ
Յունիս 14	Հայրերու Օր
Օգոստոս 10	Հանգանակային Գաշկերոյթ
	«Մասիս» շաբաթաթերթի
Հոկտեմբեր 4	Հ.Մ.Ս.ի Տարեկան Պարահանդէս
Դեկտեմբեր 31	Նոր Տարուայ Խրախճանք

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)**

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ԱՆՆԿՈՒՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ

Շարունակում էք 13-էն

ների վերաբերմունքի մասին հայ ժողովրդի դատի նկատմամբ:

Թարգմանչի հայրենասիրութիւնը կարելի է գնահատել նաև այն բանի համար, որ... Աւելի լավ է թող ինքը արտայայտուի:

«Ես այս հազուադէպ գիրքը կարդացել եմ 1941 թ. Պաղատում: Յետագայում իմ բոլոր որոնումները՝ ձեռք բերելու այս գիրքը եւ՛ թեհրանում, եւ՛ Երեւանում ապարդիւն անցան: Նպատակս էր գիրքը թարգմանել եւ դարձնել ընթերցող հասարակութեան սեփականութիւնը»:

Նա բարեխղճօրէն կատարեց իր հայրենասիրական պարտականութիւնը:

«Հին ու նոր ցաւեր» գրքի գրախօսականը եւս ես գրեցի «Արեւմտքի քաղաքակրթութեան հային խորթ բարբերը» վերնագրով, յատկապէս կանգ առնելով «Ա՛խ գաւազն, ինչո՞ւ ըրիր» իրական դէպքի հիման վրայ գրուած վիպակի վրայ: Դէպքը կատարուել է Լոս Անճելոսում: Հեղինակը բազմամիւս անգամներ գնացել եւ ուսումնասիրել է դէպքի հետ կապուած վայրերը եւ ընթերցողին է ներկայացրել, կարելի է սակ կոթողագրող մի գործ՝ համեմուած գեղարուեստական բարձր ճաշակով: Սա ողբերկական մի եղելութիւն է, որը խորթ լինելով հային, կարողացել է իր արմատները գցել նրա մէջ ու կործանման հասցրել հայ ազգի նոր սերնդի գաւազներին՝ մէկին՝ իր ուղիղ ճանապարհից սալթաքելու հետեւանքով, իսկ միւսին՝ թափած ջանքերով սայթաքողին վերադարձնել չկարողանալու համար իր արմատներին, այդ սայթաքման զոհ գնալով: Յօդուածը տպուեց 2006 թ. Յունուարին «Նոր Օր» եւ «Մասիս» թերթերում:

Ընդհանրապէս կարելի է հեղինակի «Ուղղագրութեան բարեփոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր» ուսումնասիրութիւնը, որի շնորհահանգէսը կազմակերպեց ակադ. Աշոտ Կարապետեանը «Գրական Ասպարէզ»-ի միջոցով 2003 թ. Մայիսի 3-ին, որտեղ ըստ պայմանաւորութեան ես էլ ելոյթ պիտի ունենայի, բայց շնորհահանգէսի հանդիսավար «Գրական Ասպարէզ»-ի պատասխանատու պրն. Գրիշ Դաւթեանը այդպէս էլ խօսք չտուեց ինձ: Իմ խօսքի վերնագիրն էր ««Դոց. Գուրգէն Մարգարեանի «Ուղղագրութեան բարեփոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր» գրքի կարեւորութիւնը Հայաստան-սփիւռքային կարեւորութիւններում՝ հոգեբանական առումով»»:

Մէջբերում եմ որոշ մասեր այդ յօդուածից, նկատի ունենալով դրա կարեւորութիւնը:

«Ուսումնասիրութիւնը իր տեսակի մէջ առայժմ միակ գիտական լուրջ աշխատութիւնն է ուղղագրութեան բարեփոխման անհրա-

ժեշտութեան մասին:

Այս աշխատութիւնը գրելը վտանգաւոր էր նաև հեղինակի համար, եթէ նկատի ունենանք Լոս Անճելոսի հայկական մամուլի լայնածաւալ էջերում լոյս տեսած եւ տեսնող յօդուածները արեւելահայերէնի ուղղագրութեան դէմ:

Հայաստան-սփիւռքային բարեփոխութիւններում ամէն մի հարցի քննարկման ժամանակ խիստ կարեւոր է նկատի ունենալ հոգեբանական մտտեցումները, որպէսզի, առանց այն էլ, իրար նկատմամբ պայմանական հանդուրժողութիւն ցուցաբերող հատուածներին միջեւ վիճը աւելի չխորանայ:

20-րդ դարի վերջին տարիներին՝ Հայաստանի անկախացումից յետոյ եւ 21-րդ դարի սկզբից մինչեւ այսօր հայոց լեզուի ուղղագրութեան հարցը այնպիսի ակտիւութեամբ ու եռանդով է արծարծուում, եւ արեւելահայերէնի ուղղագրութիւնը այնպէս է քարկոծուում հայրենի եւ սփիւռքահայ որոշ մտաւորականների կողմից, որ կարծէք թէ Հայաստանի պետականութեան կայացումը իր բոլոր բարգաւառն խնդիրներով կախուած է դրանից, այսինքն, եթէ վերադառնանք մեսրոպեան ուղղագրութեանը, ապա հայ ժողովրդի նման միասնական, համերաշխ, բարեկեցիկ կեանք ունեցող, լաւապրող ժողովուրդ չի լինի աշխարհի վրայ: Դժբախտաբար այդ հարցի քննարկումները ընթանում են այնպիսի բորբոքուածութեամբ, որ յօդուածագիրները անցնելով պատշաճութեան սահմանները, արեւելահայերէնի ուղղագրութեանը ինչպիսի անարդար ասէք կպցնում են եւ նաև գանազան վիրաւորական արտայայտութիւններ անում հայաստանահայերի եւ Հայաստանի պետականութեան հասցէին:

«Ուղղագրութեան բարեփոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր» գրքի վերջնական շարուածքը ես եմ կատարել: Այս կապակցութեամբ շփուելով հեղինակի հետ, տեսայ, թէ նա ինչպիսի բծախնդրութեամբ է մտնում շոշափուող իւրաքանչիւր հարցին՝ բերած փաստերը կրկին ու կրկին ստուգելով:

Արեւելահայերէնի ուղղագրութիւնը չհանդուրժող որոշ մտաւորականներ, դրա նկատմամբ իրենց զգացմունքային, բացասական եւ անվայել վերաբերմունքով, կարծէք դիտմամբ շիկացնում են միտուրտը, նպաստելով հայաստանահայի ու սփիւռքահայի իրարից հեռանալուն: Նրանցից են. Նուպար Չարխուղեանը՝ «Զիս հետաքրքրող հարցը լեզուն է եւ մանաւանդ արեւմտահայերէնի ճակատագիրը, զօր պէտք է պաշտպանել մամուլի բոլոր փերեզակներուն եւ Երեւանն եկած «հինգերորդ Զօրասիւնին» դէմ», հանգուցեալ Տիգրան Ոսկունին՝ «Լեզուն՝ ի՞նչ լեզու: Բացառութիւնները յարգելով, կրնանք ըսել թէ լեզուն դարձած է վերջին մտահոգութիւնը: Անտէր

անդատան է մեր լեզուն: Ո՛վ ինչպէս կ'ուզէ՝ կը գրէ: Ո՛չ նայող կայ, ո՛չ սրբագրող: Նոյն թերթի մէջ տեղ մը արեւելահայերէն, ուրիշ տեղ մը արեւմտահայերէն: Տեղ մը մեր ուղղագրութեամբ, ուրիշ տեղ մը խորհրդային բարբարոսութեամբ», ոմն Ռուբէն Պարսումեան՝ «Առանց ուղղագրութեան եւ հայ լեզուի կենսական խնդիրներու լուծման սփիւռքահայու եւ հայաստանցիներուն միջեւ կարելի չէ լրիւ հաղորդակցութիւն-բան մը որ նախապայման է ազգային միասնութեան: ... Սփիւռքի լեզուն մինչեւ վերջերս հայերէն էր, վախկայ որ հայաստանահայերէնը արատաւորէ գայն: ... Պէտք է Սփիւռքը պատուաստել այդ «Ժանտախտ»-ին դէմ, եթէ ուշ չէ», Արմէն Յարութիւնեան՝ «Ուղղագրութեան հարցն ալ շատ չարչարուեցաւ»: Գրող մը ըսաւ թէ 24 միլիոն տոլար պէտք է մեսրոպեան ուղղագրութեան անցնելու համար: Թէկուզ 240 միլիոն ծախսենք, արդիւնք չի տար, եթէ այդ գործը գլուխ հանելու կամքը չկայ: Իմ գաւազն ու հայերէն քիչ կը կարդայ, հայաստանեան ուղղագրութեամբ որեւէ գրութիւն չի կարդար: Իսկ ես ալ նման ընթերցում մը ետք, կը զգամ որ Մեսրոպեան ուղղագրութիւնը խախտուած է»:

Կարծում եմ մեկնաբանութիւններն աւելորդ են:

Նշեմ նաև, որ ոչ այս յօդուածը եւ ոչ էլ «Ա՛խ գաւազն ինչո՞ւ ըրիր»-ը ոչ մի թերթ չտպեց:

Հայաստանահայ եւ սփիւռքահայ գրողները պէտք է համերաշխութիւն ստեղծեն Լոս Անճելոսի հայ համայնքների միջեւ եւ միասնական պայքարով դիմակայեն հայութեան առաջ դրուած խնդիրները այս երկրում:

Ինչպէս նշել եմ «Ա՛խ գաւազն ինչո՞ւ ըրիր»-ի գրախօսականի մէջ, բոլոր մտաւորականները պէտք է մի բուռնցք դառնան Լոս Անճելոսում ի նպաստ հայապահպանման, մոռանալով հայաստանահայ, պէջրութեան, եւ այլ բոլոր ...հայ արտայայտութիւնը: Մենք լինելով Հայերի Յեղասպանութեան զոհերի սերունդը, ապագայ սերունդին պէտք է ներարկենք միասնութիւն ու եղբայրութիւն, որպէսզի հայապահպանումը դրուի ամուր հիմքերի վրայ:

Կրկին շնորհաւորելով իր յոբելիանի առթիւ, հեղինակին ցանկանում եմ աշխարհի ամենաթանկ հաճոյքը, միայն ու միայն քաջաուղջութիւն՝ բոլոր գործերի իրականացման հիմքը:

Շնորհակալութիւն ուշադրութեան համար:

**ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ**  
**ԸՆՈՒՄՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**  
**ԺԱՍՆԱԿԱՑՈՅՑԸ**  
**CHARTER CABLE**  
**26-ՐԴ ԿԱՅԱՆ**  
**(ՎԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԲՐԵՍԵՆՅԱ)**  
**ԳԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00**

**ԲԱԶ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**ժամը 10:00-ից 12:00**  
**Կլէնտէյլի 26-րդ կայանից**

**Հայ Թելեթայմը Կը Վերադառնայ**  
**18ը Ալիքի Վրայ**

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը  
**Շարաքը 7 օր անվճար**  
 Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

**Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել**  
**Հայկական Թելեթայմ (818) 982-2400**

**The Armenian Teletime**  
**Is Back On Channel 18**

**Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day**  
**7 Days Per Week, Free**  
**No Subscription Fee - Plus 40 Additional Channels**  
**For info call The Armenian Channel (818) 982-2400**

**ՇՆՈՐԸԱԿԱԼԻԲ**

Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուզճեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց հարազատին՝ Օժէն Մերձանեանի մահուան առթիւ, իրենց այցելութեամբ, հեռաձայնով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:

Առ այդ կը կատարեն իրենց նուիրատուութիւնները:  
 «Մասիս» շաբաթաթերթին՝ \$200  
 Հ.Մ.Մ.ին \$200  
 Կիլիկեան Բարեսիրական Միութեան \$200



Nor Serount Cultural Association

proudly presents

# An Evening of Enchanting Music

*with two prodigies*



*Arik Arakelyan*  
*Saxophone*



*Daniil Trifonov*  
*Piano*

Sunday, March 9, 2008 at 6:00 pm.

First German United Methodist Church

556. W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202

***For Tickets, Contact***

***(818) 391-7938 or (818) 502-3233***